№ 99 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 13

1907

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 13 № 99

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ"

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ընկերները և բարեկամները սրտի կսկիծով յայտնում են իրանց հայրենակիցներին և ընկերներին

Մշեցի Մուշեղ Առաքելեանցի

եղեռնական մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 10-ին, երեկոյեան ժամը 9-ին: Թաղումը տեղի կունենայ այսօր, կիրակի, ամսիս 13-ին, առաւօտեան ժամը 10-ին, դէպի Թանգոյեան եկեղեցին և այնտեղից Խօջիվանքի գերեզմանատունը: 1—1

ԵՂԻՍԱԲԷԹ ՋԱՔԱՐԵԱՆ ԳԷՈՐԳԵԱՆՑԸ

յայտնում է իր ազգականներին և բարեկամներին, որ կիրակի, ամսիս 13-ին, իր հանգուցեալ տէգր

Խաչատուր Բաղդասարեան Գէորգեանցի

մահվան տարեդարձի օրը կը կատարվի հոգեհանգիստ Մողնու ս. Գէորգ եկեղեցում, պատարագից յետոյ ժամը 12-ին: 1—1


Лучшее для зубовъ.
ОДОЛЬ
Цѣна 1Р. 50К.

ՕԴՕԼԻ

սիստեմատիքաբար ամեն օրվայ գործածութիւնը ատամների և բերանի խոռոչի լաւագոյն խնամատարութիւնն է կազմում: Շշի գինը, որը բաւական է մի քանի ամիս, 1 ր. 50 կ.:

առ. 1—1

ՀՐԱՒԷՐ

Թեթղեհէմի ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխի ժամանակամիջոցը լրացած լինելու պատճառով, ամսիս 13-ին, կիրակի առաւօտեան ժամը 10-ին, երկրորդ անգամ ժողով է լինելու նոր երեցփոխ ընտրելու. ուստի սրանով հրաւիրում եմ յիշեալ եկեղեցու մեծապատիւ պ. ծխերին, որ նշանակված օրն և ժամին շտապեն եկեղեցի ընտրութեանը մասնակցելու:

Գործակալ՝ Գրիգոր ա. քահանայ Մանդակունի:

առ. 1—1

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

Ամառս հիւանդներ կընդունէ, ինչպէս անցեալ տարի, յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը

Կիսլօվօդսկում (Отель Бештау).

առ. (կ. չ. ու.) 1—12

ՕԳՏՎԵՑԷՔ ԴԷՊՔԻՑ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

„ԵՂԲ. ՅԱԿՈԲՋԱՆԵԱՆՆԵՐ ԵՒ ՍԱՐԳՍԵԱՆՑ"

որը ունի տղամարդկանց, կանանց և երեխայոց պատրաստի հագուստեղէնի մագազիններ՝

1) Գօլովինսկի պրօսպէկտում, տուն Մանթաշեանի «ԷՔՍԵԼՍԻՕՐ» ֆիրմայի տակ,

2) Նիկօլայեվսկի կզզու վրա, տուն Քամօյեվի, նաև բաժանմունք Բագւում և Եկատերինօդարում, վճռեց կրճատել մագազինների թիւը և այդ պատճառով Թիֆլիսում, երկու մագազիններում գտնվող վերջին սեզօնի բոլոր 300,000 ՌՈՒԲԼԻ գումարի ապրանքը վաճառել ԿԻՍԱԳՆԵՐՈՎ:

Ամբողջ ապրանքը պատրաստված է սեփական գործարանում—Օդեսսայում, առանձին պատուէրով, Ռուսաստանի և արտասահմանեան կտորներից:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ. Ապրանքադրոշմների վրա կապոյտ մատիտով նշանակված են գները ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԳՈՒԹԵԱՆ: Հնարաւորութիւն է տրվում պ. պ. գնողներին—գնած ապրանքը վերադարձնել եւ փողը ւրի յետ ստանալ, եթէ ուրիշ ֆիրմաներում աւելի էժան լինի: Մագազինները բաց են առաւ. ժամը 8-ից մինչեւ երեկոյեան ժամը 6-ը:

4—10

25% զուտ արդիւնքից յատկացվում է յօգուտ հայ սովեալների

Կիրակի, մայիսի 13-ին

Թիֆլիսի Ժողովարանի այգում

Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան

Կը կայանայ

ՄԱՅԻՍԵԱՆ ԶԲՕՍԱՆՔ

ՀԱՄԵՐԳ «Արևելեան Երաժշտական Ընկերութեան»

Գ. Քեռիբեանի ղեկավարութեամբ, այգում, խխունջի մէջ: (Հայկական, վրացական և պարսկական եղանակներ):

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Կը կատարէ երգեցիկ խումբը պ. Մանուկեանի ղեկավարութեամբ:

Վիճակախաղ, կարթ, բախտի տակառ, բլրակ (горка), petit chevaux, հանրամատչելի բուֆետ, երկու երաժշտական խումբ:

Մուտքը մեծերի համար 40 կոպ., երեխաների, աշակերտների (համազգեստով) և զինուորների համար 20 կոպէկ:

Համերգը կը սկսվի ժամը 7-ից

Համերգից յետոյ ՊԱՐԵՐ

Զբօսանքը կը սկսվի ժամը 4-ին և կը վերջանայ գիշ. ժամը 12-ին: Կոնտրմարկա չէ տրվում:

առ. (ու. շ. կ.) 3—3

Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան դպրոցի

հոգաբարձութիւնը

հրաւիրում է առաջիկայ ուսումնական տարվայ համար տեսուչ տարեկան 2000 ռուբլի ռոճիկով և շաբաթական 6 դասով: Դասագինը՝ 50 ռուբլի: Ցանկացողները պէտք դիմեն հոգաբարձութեանը մինչև մայիսի 25-ը, ուղարկելով նաև համառօտ curriculum vitae. Հասցէն՝ Тифлисъ Бебутовская ул., № 14, Анановское женское училище.

8, 11, 13, 16, 18, առ. 3—5

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մշտական մահճակալներով

Ելիզավետինսկայա փողոց № 79, տելեֆօն 1026.

Հիւանդների ընդունելութիւնը ամեն օր

ՄԻՔԱՅԵԼ ԱՂԱՋԱՆԵԱՆ.—11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ.—11—12 ժ.—ջղային, ներքին հ. և էլէքտրօբուժութիւն:
Գ. Հ. ԹԱԴԷՈՍԵԱՆ.—12—1 ժ. ներքին և երեխայոց հ.:
Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ.—12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ս. Ա. ԼԻՒԻՐ.—12—1 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ.—1—2 ժ. վիրաբուժական հ.:
Գ. Ա. ԲԷՅԷՐ.—1—2 ժ. երեխայոց և ներքին հ.:
Ի. Ն. ԹՈՒՄԱՆՈՎ.—5—6 ժ. (երեկոյեան)-կանանց հ. և մանկաբարձութիւն:

Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում են միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ծծմայրների ընտրողութիւն:

Բժշկական խորհուրդի համար վճարը 50 կոպ. Օպերացիաների և համախորհուրդների վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նօմէրներից:

առ. Ե. Հ. Կ. 43—100

ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ

քաղաքամասի մի խումբ ընտրողներ խնդրում են այդ քաղաքամասի բոլոր ընտրողներին շնորհ բերել քաղաքային դումայի դահլիճը (մուտքը Վելեամինօվսկի փողոցից), երկուշաբթի, մայիսի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին՝ 1907—11 թ. թ. քառամեակի ձայնաւորների թեկնածուներ մատնանշելու համար:

առ. 1—1

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութիւնը

Պատիւ ունի յայտնելու ընկերութեան մեծարգոյ անդամներին, որ կիրակի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է երկրորդ անգամ տարեկան ընդհանուր ժողով:

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

1) 1906 թ. հաշւետուութիւնը:
2) 1907 թ. նախահաշիւները:
3) Վերաստուգող Յանձնաժողովի զեկուցումը:
4) Ընկերութեանը կտակած հանգուցեալ Յովհ. Խուդադեանի քարվանսարայի վերաշինութեան հարցը:
5) Վարչութեան 4 անդամների, 4 փոխանդամների և վերաստուգող յանձնաժողովների 3 անդամների ընտրութիւնը:
6) Որբանոց-դպրոցի հարցը:
7) Նոր կալուած գնելու հարցը:
8) Ընթացիկ հարցեր:

Այս ժողովը կը կայանայ քանի անդամ որ ներկայ լինի: (ա. օ.) 4—4

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը ժ. 11—5 ժ.

ՌՈՒԴԷՆԿՕ.—Ներքին հիւ. կիրակի 3—4 ժ.:
ՍԱՆՉԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բկի, ամեն օր ժ., 2—3:
ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ. ամեն օր 2—3 ժ.:
ԳՕՐՕԲՑՈՎԱ.—Մասսաժ. ամեն օր 11—5:
ԱՍՊԻՍՕՎ.—Ականջի, բկի, քթի. երկ., երեք., չոր. 1-2, չորեք., կիր. 12—1:
ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., ամեն օր 1—2 բացի կիրակի օր:
ՊԱԻԼՕՑԿԻ.—Վիրաբ. ամենայն օր 12—1:
ԳՕՐԱԼԵՎԻՉ.—Ներքին, ամեն օր 1—2:
ՆԷՈՒՑՄԻՆ.—Աչքի. երկ., չոր., հինգ., ուրբ., 12—1:
ԻՆԱԵՎ.—Կանանց. ամեն օր 4—5
Կին բժ. ԻՈՍԵԼԻԱՆԻ.—Կանանց. երկուշ., չոր., հինգ. ուրբ., կիր. 11—12:
ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամեն օր 1—2
ԲՕԺՕՄՍԿԻ.—Ներքին հիպնօզով, ամեն օր 4—5:
ՄՕՆՍԷ.—Երեխ. երեքշ, հինգշ, շաբ., 4—5 ժ.
ՆԵՎԶՕՐՕՎԱ.—Ատամի հիւ. ամեն օր 11—5, կիր. 1—3:
ԳԻՎԱՐՍԿԻ, ԶՈՒԴՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզներ:
ԵՐՄՕԼԱԵՎ.—Ներք. երեխ. ամեն օր 11—12 ժ.:

Բժշկական համախորհուրդներ, մասսաժ, սըրսկումն, անդամահատութիւն, անալիզ, հիպնօզ, ատամների և սպասաւորների քննութիւն—ըստ համաձայնութեան:

առ. (ա. օր.) 94—143

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ

միջնակարգ կրթութեամբ, որը ուսանում է Ներսիսեան դպրոցի լսարանում և ունի հայոց լեզուից գիմնազիայի ուսուցչութեան ցենզ, ցանկանում է դասեր ունենալ ընտանիքներում: Համաձայն է և ամառանոց գնալու կամ ամառանոց տանելու: Պատրաստում է նաև թէ Ներսիսեան դպրոցը աւարտելու և թէ ծխական ուսումնարանների զանազան ցենզեր ստանալու համար: Հասցէն իմանալ «Մշակի» խմբագրատանը:

առ չ. կ. 3—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական դաշնագիր. Տարածեցէք կուլտուրա. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Պետական Դումայի շուրջը. Մամուլ. Ագրարային յանձնաժողովում. Զառամեալների պալատը և Պետական Դուման. Դիպլօմատների կարծիքը Ռուսաստանի ներքին քաղաքականութեան մասին. Սօցիալ դեմօկրատների համագումարը Լօնդօնում. Մի ուղղումն. Տեղեկութիւններ գաւառից. Գիւղական կեանքից. Նամակ Գանձակից. Նամակ Շուշուց. Մեր վերջին խօսքը պ. Արտաշէս Մելքոնեանին. Պետական Դումա. Բաց նամակ. Մի փոքրիկ պատասխան. Նամակներ խմբագրութեան. Ներքին Լուրեր. Ոստիկանական տեղեկութիւններ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—Մեր կեանքէն:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

I

Շուտով կը կնքվի մի նոր քաղաքական դաշնագիր Ֆրանսիայի և Ճապօնիայի միջև:

Այդ դաշնագրով երկու պետութիւնները կը պայմանաւորեն իրանց յարաբերութիւնները մի շարք միջազգային խնդիրներում և կորոշեն իրանց ազդեցութեան շրջանները Հեռաւոր-Արևելքի հողերում և ջրերում:

Դիւանագիտական աշխարհը, քաղաքական մամուլը մեծ նշանակութիւն են տալիս այդ դաշնագրին, որովհետև նրա մէջ աշխատում են տեսնել ոչ միայն մի մասնաւոր համաձայնութիւն երկու պետութիւնների՝ Ֆրանսիայի և Ճապօնիայի միջև, այլև մի նոր քաղաքական դաշնակցութիւն, որը կարող է ազդեցութիւն ունենալ եւրոպական միջազգային կոնցերտում և համաշխարհային խաղաղութեան ասպարէզում:

Եւ բնական է, որ քաղաքագէտները ցանկանում են լուծել իրանց համար այն հարցը, թէ այդ նոր դաշնագիրը կամ Ֆրանսիայի և Ճապօնիայի համաձայնութիւնը ինչ փոփոխութիւններ են առաջացնելու պետութիւնների դասաւորութիւնների մէջ զանազան ընդհարումների ժամանակ: Եւ մեկնութիւններ անպակաս են:

Աչքի առաջ ունենալով անգլօ-ճապօնական ու ռուս-ֆրանսիական դաշնագրերի գոյութիւնը և Անգլիայի ու Ռուսաստանի մերձեցումը, որը կարող է վերջանալ ռուս-անգլիական համաձայնութեամբ, այլև այն հանգամանքը, որ Ռուսաստանը մերձենում է Ճապօնիայի հետ, մենք տեսնում ենք, որ վերջ ի վերջոյ միմեանց մօտենում են Ռուսաստանը, Ֆրանսիան, Անգլիան և Ճապօնիան:

Այդ չորս պետութիւնների փոխադարձ մերձեցումը նախ և առաջ երկար տարիներով որոշում է Հեռաւոր-Արևելքի վիճակը, որը չէ կարող փոփոխութիւնների ենթարկվել առանց այդ պետութիւնների համաձայնութեան: Եւ ուրեմն կարելի է համարել Հեռաւոր-Արևելքի դրութիւնը որոշված երկար տարիներով:

Դա նշանակում է, որ եթէ այդ չորս պետութիւնները միմեանց հետ համաձայնութիւն ունենան նաև ուրիշ քաղաքական գործերում, այն ժամանակ նրանք վճռական ձայն կունենան համաշխարհային քաղաքականութեան մէջ, պարփակելով թէ Հեռաւոր-Արևելքը և թէ եւրօպական խնդիրները:

III

Չորս պետութիւնների մերձեցումը անհանգստութիւն է պատճառում Գերմանիային: Բայց Գերմանիան այդտեղ հնձում է մասամբ այն, ինչ որ ինքը սերմանել է: Նրա չափազանց եռանդուն գործունէութիւնը՝ դուրս մղելու քաղաքական և տնտեսական ասպարէզներից Ֆրանսիային և Անգլիային, նրա փորձերը կապելու ամբողջ իսլամական աշխարհը իր քաղաքական նպատակների հետ, նրա քաղաքագիտական դաւերը Թիւրքիայում, Բալկանեան թերակղզում, Հարաւային-Աֆրիկայում, Մարօքքօյում, Պարսկաստանում և Չինաստանում, նրա յարուցած խոչընդոտները միւս պետութիւնների առաջխաղացութեան դէմ—զինեցին միւս պետութիւնների հասարակական կարծիքը Գերմանիայի դէմ և ստիպեցին միութիւններ կազմել գերմանական յաւակնութիւնները ճնշելու և սղմելու համար:

Եւ ի հարկէ, եթէ վերև յիշած չորս պետութիւնները համերաշխ լինեն եւրօպական հարցերում, Գերմանիայի և նրա դաշնակիցների առաջ դրված կը լինի մի չափազանց զօռ ույժ, որին դիմադրելը կը լինի շատ դժուար և պատասխանատու:

IV

Անկասկած, ֆրանս-ճապօնական համաձայնութիւնը ներկայումս ամենևին «ագգրեսիվ» նպատակներ չունի և այդ երկու պետութիւններից ոչ մէկը կռուելու ցանկութիւն չունի ոչ ոքի հետ: Պատերազմը չափազանց ծանր փորձութիւն է և իւրաքանչիւր պետութիւն փախչում է այդ փորձութեան բաժակից: Բայց, անշուշտ, քաղաքական ամեն մի մերձեցում, պետութիւնների մէջ կնքված ամեն մի խոշոր դաշնագիր գրաւում է ազդեցութիւնների որոշ շրջաններ քաղաքական աշխարհում, որոնք կարող են ճգնաժամի րօպէներում էական նշանակութիւն ունենալ:

Պետութիւնները, եթէ գնահատում են խաղաղութիւնը և կուլտուրայի անընդհատ զարգացումը, պարտաւոր են վերջապէս ըմբռնել, որ միմեանց վնասելու և կործանելու քաղաքականութիւնը ոչ մի բարի հետևանքի չի բերի և կը թափէ փորձանքներ հէնց նրանց վրա, որոնք դաւեր են սարքել չափազանց եսասիրական ուղղութեամբ:

Գերմանական քաղաքագիտութիւնը չափազանց երկար ժամանակ դաւեր էր սարքում հարևանների դէմ և անշուշտ դրանով ստիպեց իր մրցակիցներին և հակառակորդներին համախմբվելու:

Ա. Քալանթար

ՏԱՐԱԾԵՑԷՔ ԿՈՒԼՏՈՒՐԱ

Սարսափելի, աներևակայելի է հայ ժողովրդի կուլտուրական վիճակը գաւառներում: Գանձակի և Երևանի նահանգների հայաբնակ գաւառները բանուորների մի անվերջ կոնտինգենտ են ուղարկում Բագու, գործարաններում աշխատելու ռուս և թուրք բանուորների հետ միասին: Եւ վիճակագրական տեղեկութիւնները ու ժամանակի հետազօտութիւնները երևան են հանել մի վերին աստիճանի տխուր փաստ հայ բանուորների վերաբերմամբ: Բանից դուրս է գալիս, որ անգրագէտների ամենից մեծ տոկոսը տալիս են հայ բանուորները: Ռուս և թուրք բանուորների շարքում նրանք ամենայետին տեղն են գրաւում: Եթէ ռուս բանուորների 40%-ը գրագէտ է, թուրք բանուորների 50%-ը, հայ բանուորները տալիս են միայն 10—15% գրագէտ:

Բնականաբար, ամենից տգէտը, ամենից շատ մոլոր և բարոյական խաւարի մէջ խարխափողը հայ բանուորն է, որովհետև այնտեղ, ուր նա ապրում էր, համատարած խաւար է. տասնեակ տարիների ընթացքում չեն եղել դպրոցներ, չէ եղել ոչ մի կուլտուրական հաստատութիւն: Այն օրից, երբ առաջին անգամ հայոց դպրոցները փակվեցին, այսինքն 1884 թւից ի վեր, ամբողջ գաւառներ, հարիւրաւոր հայ գիւղեր մնացին առանց դպրոցների, և բազմաթիւ սերունդներ մեծացան առանց որ և է կրթութեան, նոյնիսկ առանց պարզ գրագիտութեան: Դպրոցներ չը լինելու պատճառով, ինտելլիգենտ ույժերն էլ հեռացան և հայ գաւառը մնաց առանց ինտելլիգենտ ղեկավարների: Մենք չաշխատեցինք, նոյնիսկ այն ժամանակ, երբ իրաւունք և ազատութիւն ստացանք, դպրոցներ բանալ: Կուլտուրական գործը յետ մղվեց ամեն տեղ. ոչ մի տեղ չարտայայտվեց որ և է գրական, պտղաբեր գործունէութիւն և մատաղ սերունդը, երիտասարդութիւնը, առաջնորդվեց այնպիսի սխալ ճանապարհով, որ նա շատ հեշտութեամբ ընտելացաւ անգործութեան, պարապութեան և արհամարհեց նոյնիսկ ինքնակրթութեամբ պարապելու ձգտումը:

Եւ այդպիսի ցաւալի դրութեան արդիւնքը աչքի առաջ է. համատարած խաւար է տիրում գաւառում. չը կան դպրոցներ ոչ գրագիտական, ոչ գիւղատնտեսական, ոչ պրոֆէսիօնալ. չը կան լուսաւորական, կրթիչ հաստատութիւններ. չը կան հիւանդանոցներ, չը կան որբանոցներ, բարեգործական հաստատութիւններ, օրինակելի ֆերմաներ:

Ժամանակ է, որ զբաղվենք կուլտուրական խաղաղ գործունէութեամբ. ժամանակ է, որ հոգ տանենք ստեղծելու հանրակրթական, գիւղատնտեսական դպրոցների մի ամբողջ ցանց գիւղերում և գաւառական գլխաւոր կէտերում. ժամանակ է հիմնելու հիւանդանոցներ, ընթերցարաններ, օրինակելի ֆերմաներ, ագարակներ:

Թող հանդէս գան ինտելլիգենտ ույժերը և անձնատուր լինեն խաղաղ, պտղաբեր կուլտուրական գործունէութեան: Սօցիալական ամենամեծ յեղափոխութեան աջողութեան առաջին պայմանը՝ կրթականն է, գրագիտութիւնը, կուլտուրականութիւնը:

Տգէտ, խաւար հասարակութիւնը, ժողովուրդը չէ կարող ստեղծել ոչ մի մնայուն, յարատև գործ, չէ կարող առաջադիմել և բարգաւաճել:

Դէպի գործ, դէպի կուլտուրական անշեղ և յարատև գործունէութիւն:

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 12 մայիսի: Ընդհանուր զեմստվային միջոցներից 200,000 ռուբլի յատկացրված է Կարսի շրջանի անբերրիութիւնից վնասված գիւղերի բնակիչներին սերմացու տալու համար: Այդ գումարը ուղարկված է Կովկասի Փոխարքային:

Պետերբուրգ, 11 մայիսի: Ներքին գործերի մինիստրը մայիսի 9-ին հաստատեց մատակարարական մասնաժողովի որոշումը՝ Կովկասի Փոխարքայի տրամադրութեան տակ դնելու 8664 ռուբլի իբրև փոխատուութիւն տալու Կարսի շրջանի 9 գիւղերի բնակիչներին, նոյնպէս 113,358 ր. աւանս՝ Անդրկովկասի զանազան տեղերին ուտելիքի և սերմացուի տալու համար: («Հ. Գ.»)

Բագու, 11 մայիսի: Մօսկով-Կովկասեան ընկերութեան և Բօրնի նաւթահանքերում գործադուլը վերջացաւ: Գործի կպաւ նաև Լիանոզովի գործարանը, որ աշխատանքները դադարեցրել էր երեք օր առաջ: Գործադուլը շարունակում են Մանթաշեվի Բիբի-էյբաթեան նաւթահանքերը:

(«Հ. Գ.»)

Մէշէդ, 11 մայիսի: Սավզեվարում սպանված ռուսահպատակի բոլոր 13 մարդասպանները ձերբակալված են: Երկու գլխաւոր մեղսակիցների մահվան պատիժը ռուսաց դեսպանի պնդելով փոխարինվել է ցմահ աքսորով: Դեսպանի միջամտութիւնը ազգաբնակութեան վրա նպաստաւոր տպաւորութիւն է թողել

(«Հ. Գ.»)

«Русь» լրագրին Երևանից հեռագրում են, որ ոստիկանութիւնը Էջմիածնում վարդապետների միջև եռանդուն կերպով որոնում է «Դաշնակցութիւն» կուսակցութեանը համակրող անձերին: Մի քանի անձեր արդէն աքսորված են:

—

Հին-Նախիջևանի գաւառի Դիդուվար գիւղի կողմից Ստեփան Նազարեան և Մարտիրոս Բաբայեան հետևեալ հեռագիրն են ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսին և մեր խմբագրութեան:

«Նախիջևանի գաւառի գիւղացիները Ձեր վեհափառութեան բողոքագիր են ներկայացրել յաջորդ Լևոն վարդապետի վրա: Մենք ջարդերից փրկվածներս դիմում ենք Նպաստամատոյց Յանձնաժողովին ցոյց տալ մեզ նիւթական օգնութիւն, բայց Լևոն վարդապետը մերժում է, մինչև որ չը ներկայացնվի նրան համայնական վճռագիր, թէ պախարակում է գանգատաւորներին և գովաբանում նրա անարժան գործերը: Լևոն վարդապետի խուսափումներից և աններելի գործողութիւններից ազգաբնակութիւնը ենթարկվում է սովի: Խնդրում ենք կարգադրութիւն:»

Մենք համոզված ենք, որ Կենտրոնական Նպաստամատոյց Յանձնաժողովը կը կարգադրէ քննել և պարզել թէ որքան հիմնաւոր է այդ բողոքը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի: Դումայական նախահաշւի փոխ-մասնաժողովները ընդունեցին մաքսատան վարչութեան և բանտային գլխաւոր կառավարութեան ելևմուտը առանց փոփոխութեան, իսկ սահմանապահ զօրքի ելևմուտը կրճատվեց 30,000-ով: Ընդունեցին նաև ժողովրդական լուսաւորութեան մինիստրի 22 առաջարկութիւնները՝ նոր շինութիւններ կառուցանելու, դպրոցները կարգաւորելու և այլն, որոնց վրա ընդամենը ծախսվելու է մէկ միլիօն րուբլի:

Դումայի 9-րդ բաժինը որոշեց բեկանել Անդրբալկանեան շրջանի օտարազգիների ընտրութիւնները:

Դումայի 4-րդ բաժինը որոշեց բեկանել Պօլտավայի նահանգի ընտրութիւնները:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Հինգշաբթի, մայիսի 10-ին, կայացաւ ագրարային յանձնաժողովի նիստը Ա. Բալանթարի նախագահութեամբ:

Ժողովը զբաղվեց անցեալ նիստի նշանակած խնդիրների քննութեամբ:

Փիրալեան զեկուցեց Անդրկովկասի ժամանակաւոր—պարտաւորեալ գիւղացիների մասին վիճակագրական տեղեկութիւններ, որոնք քաղված էին զանազան աղբիւրներից:

Այդ տեղեկութիւնների քննութիւնը ցոյց տուեց, որ ճիշտ վիճակագրական թւերի հետ միասին կան մի շարք անճիշտ թւեր և չեն պարզված հողերի և կալուածների քանակը զանազան տեղերում:

Ժողովին մասնակցողներից մէկը առաջարկեց օգտվել այն թւերից, որոնք նշանակված են լինում հողերի պլանների վրա, բերև «էկսպլիկացիաներ»: Միւսները առարկեցին, որ թւերը չեն վերաբերում մի շրջանի, մի ժամանակամիջոցի և չեն համապատասխանում հողերի դասաւորութեան ներկայ վիճակին, ուստի հազիւ թէ գործնական լինի այդ թւերի հաւաքածուն, մանաւանդ որ հաւաքածուի կազմելը շատ մեծ ժամանակ կը պահանջէ:

Հետևեալ նիստում Բօճէվին և Սակվարելիձէ կը կարդան զեկուցումներ ագրարային վիճակագրութեան և իրաւական-ագրարային խնդիրների մասին:

Ժողովը բազմամարդ էր:

ՕՐՎԱՅ ԽՆԴԻՐՆԵՐ

XIX

Սկանդալները Դումայում քրօնիկական են դառնում:

Ծայրայեղ աջակողմեան բանակը Պուրիշկևիչի ղեկավարութեամբ կատարեալ պատուհաս է դարձել ժողովրդական ներկայացուցչութեան համար:

Ստոլիպինի սահմանադրական կաբինետը եթէ ընտրողական բեպլեսանքներով անկարող եղաւ հասնել իր բուն նպատակին, այնուամենայնիւ նա այսօր կարող է պարծենալ ու հրճվել նրա տուած արդիւնքներով: Կրիժանովսկու սադրագործութեան չարաբաստիկ ծնունդը գործում է մեծ եռանդով:

Սակայն ինչպէ՞ս է նա գործում, այդ է խնդիրը:

Մինչև այժմ Դումայի գործունէութեան ամբողջ ընթացքում մենք չը տեսանք և ոչ մի փաստ, որը հիմք տար կարծելու, որ այդ խմբակը ընդունակ է, գոնէ, մի որևէ հարցում լուրջ ու բեղմնաւոր գործունէութեան. չը կայ ոչ մի ապացոյց, որ վկայէ մեզ թէ նրանք ունեն պատկառելի պրինցիպներ, հետևում են քաղաքական կամ, մինչև իսկ, տնտեսական մի որոշ ծրագրի: Դրա փոխարէն ամեն քայլափոխում նրանք տալիս են միմոսութիւնների և սկանդալների կատարելագործված օրինակներ: Պատրիօտների համակայսերական համագումարը վերջանալուց անմիջապէս յետոյ Պուրիշկևիչը վերադառնում է Դումայի գործունէութեանը աւելի մեծ եռանդով, թարմացած ույժերով: Այդ արդէն յայտնի է մայիսի 1-ի և 4-ի նիստերից: Նրանք, որոնք առանձին ուշադրութեամբ հետևել են այդ նիստերին և լաւ լսել են աջակողմեանների սարքած սկանդալների մանրամասնութիւնները, կիմանան, որ նրանց ամբողջ տակտիկան մի նպատակ ունի,—կամ պայթեցնել Դուման, շտապեցնել նրա արձակումը և կամ, խանգարելով նրա օրէնսդրական գործունէութիւնը, վարկաբեկ անել ժողովրդական ներկայացուցչութիւնը որպէս այդպիսին ու նրա ընդհանուր գաղափարը ժողովրդի առաջ:

Բարեբաղդաբար այդ նպատակով արված նրանց բոլոր փորձերը ապարդիւն անցան: Մայիսի 4-ի միջադէպը, որի ժամանակ նախագահը ստիպված եղաւ սկանդալիստ Պուրիշկևիչին իր երկու ընկերների հետ միասին նիստից արտաքսել և զրկել 15 նիստերի մասնակցելու իրաւունքից, ամենայարմարն էր այդ փորձերից, բայց դա էլ անհաջող անցաւ:

Այդ դէպքը ազգաբնակութեան համար ինքնըստինքեան չափազանց կոնկրետ օրինակ է, թէ ինչպիսի անխարկանութեամբ է աշխատում ամեն մի առիթից օգուտ քաղել, ինչպիսի գիտումներով է ղեկավարվում, ինչպիսի անիմաստ տակտիկայի է հետևում Պուրիշկևիչի կլօունական ընտանիքը իր նպատակների ձգտման մէջ:

Բացի սկանդալներից ու միմոսութիւններից նա ոչ մի ընդունակութիւն չէ ներկայացնում ժողովրդական ներկայացուցչութեան մէջ...:

Այդպիսով ազգաբնակութեան այն մասը, որ մոլորութեամբ իր ձայները վստահացել է նրանց, ոչ միայն կորցնում է իր իսկական ներկայացուցչութիւնը, այլ և ինքնասպանութիւն է գործում՝ վտանգելով հայրենիքի ապագայ բարօրութիւնը:

XX

Դիկտատուրայի մասին մամուլը շատ խօսեց... Բայց մինչև օրս էլ այդ «պատւաւոր» պաշտօնը բաց է մնում, երևի, յարմար թեկնածու չը լինելու պատճառով:

Յայտնի չէ՝ սահմանադրական կառավարութիւնը կարմիր խնձոր ուղարկե՞ց «ռուս ժողովրդի միութեան» եռևից թէ՞ ոչ: Յայտնի է, սակայն, որ վերջինս շտապեց իր ծառայութիւնը առաջարկել բիւրօկրատիային և այն էլ ինչպիսի փրկարար ծրագրով. նա պէտք է լինի ամբողջ հայրենիքի միակ գերագոյն տնօրէնը, նրա իրաւասութեանը պիտի ենթարկվեն դպրոցները, մամուլը, հասարակական հաստատութիւնները, եկեղեցական ամբիոնը, զօրքը և այլն:

Բայց ամենից ուշագրաւը այն է, որ նա պահանջում է պահպանել ներքին կառավարութեան մէջ մինչև այժմ գոյութիւն ունեցող այն բոլոր կարգերը, զինուորական դրութիւնները, գեներալ-նահանգապետները, զինուորա-դաշտային դատարանները, մանր ազգութիւնների քաղաքական և քաղաքացիական իրաւազուրկ վիճակը, զինուորական իշխանութեան, մանաւանդ «ռուս ժողովրդի միութեան» անսահման գերիշխանութիւնը...

Ահա այն հայրենասիրական զգացմունքները, որոնք թելադրում են նրան իր թեկնածութիւնը առաջարկել բիւրօկրատիային, գործունէութեան ասպարէզ նետվել դիկտատօրի անկօնտրոլ, սանձարձակ մանիայով...

Հարկ կա՞յ ասելու, որ դա ցնորք է միայն, որ ոչ Ռուսաստանը և ոչ էլ ինքնակալութիւնը կարօտ չեն սև-հարիւրեակայինների միջամտութեան, նրա ջարդարար զօրութեան... Հայրենիք, ինքնակալութիւն, ազգ, ուղղափառ եկեղեցի—այդ բոլորը ամբոխի տրամադրութիւնը շոյելու, խաբելու համար են նրանք արտասանում: Կասկած չը կայ, որ այդ համայնէ ֆրազների տակ նրանք փայփայում են իրանց նիւթական և իրաւական շահերը, դարբնում են իրանց արտօնեալ դրութիւնը:

Ինչպէ՞ս մի այնպիսի առաջնակարգ հարցի մասին, ինչպիսին է ագրարական, հողային հարցը, որից մեծ սպասելիքներ ունի ամբողջ գիւղացիութիւնը, «ռուս ժողովրդի միութիւնը» որոշ, պրինցիպային բան չէ ասում, այլ վերապահում է եռևակայական «զեմսկի համաժողովին»:

Շատ հասկանալի է թէ ինչ նպատակների է հետևում «միութիւնը» և՛ Դումայում, և՛ նրանից դուրս:

Կարո՞ղ է ժողովրդի իսկական բարեկամը այդպիսի վտանգաւոր ու թշնամական դերը բռնել դէպի ժողովրդական իրաւունքները և ձգտումները:

Պուրիշկևիչի ու իր արբանեակների սկանդալները, որքան էլ վիրաւորական են և անպատւաբեր մի երկրի ժողովրդական ներկայացուցչութեան համար, նրանք անխուսափելի են «սահմանադրական» կաբինետի և կառավարչական շրջանների ներկայումս բռնած անորոշ, երկդիմի քաղաքականութեան ու տրամադրութիւնների շնորհիւ: Քանի շարունակվում է այդ դրութիւնը, Դուման անզօր է անձամբ արմատախիլ անելու իր միջից այդ չարիքը, որ պատրաստ է ամեն տեսակ սկանդալի և պրովօկացիայի դիմելու: Արմատախիլ անելու դերը պատկանում է այն ժողովրդին, որը ընտրել է նրանց. նա պէտք է ցոյց տայ իր թշնամիներին իրանց իսկական տեղը:

Եւ նա ցոյց կը տայ:

Լ. Դանիէլեան

ԶԱՌԱՄԵԱԼՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

Մեր երկպալատեան սիստեմի փաստակարութիւնը այժմ է միայն ակներև դառնում:

Մինչև այսօր, եթէ նրա հակառակորդները իրանց առարկութիւնները նրա փաստակարութեան մասին հիմնում էին լոկ թէօրետիքական դատողութիւնների ու ենթադրութիւնների վրա, այժմ նրանք ամենայն իրաւունքով կարող են խօսել փաստերով, կարող են մատնանշել մեր այդ տեսակ սահմանադրութեան այնպիսի թերութիւնների վրա, որոնք զգալի կերպով սահմանափակում են ժողովրդական ներկայացուցչութեան դեմօկրատական գործունէութիւնը:

Մեր նորածին սահմանադրական կեանքի այս ամբողջ ժամանակամիջոցում թէ առաջին և թէ երկրորդ Դուման կարողացել է ընդունել չորս օրինագիծ միայն և ներկայացնել Պետական Խորհրդին:

Ներկայացված օրինագծերից նրանք, որոնց դէմ չէր կառավարութիւնը, ինչպէս օրինակ մատակարարութեան և 1907 թւի զինուորակոչութեան օրինագծերը,—Պետական Խորհուրդը հաստատեց. իսկ այնպիսիները, որոնք չեն համապատասխանում կառավարութեան հայեացքներին՝ չէ հաստատում:

Անցեալ Դումայի ընդունած օրինագիծը մահվան պատիժը վերացնելու մասին, չը քննեց Պետական Խորհուրդը, իսկ այսօր էլ մերժել է զինուորա-դաշտային դատարանները վերացնելու օրինագիծը:

Այստեղ արդէն Պետական Խորհուրդը ուղղակի ոտնատակ է տալիս երկու պալատների սահմանադրական գործունէութեան համար փայփայվող համերաշխութեան գաղափարն անգամ:

Բայց, մի՞թէ կարելի էր ուրիշ բան սպասել նրանից: Չը պէտք է մոռանալ, որ նա ամբողջապէս կազմված է բարձրաստիճան չինովնիկներից և ժամանակակից ռէակցիօն զեմստվօների ու քաղաքների տխրէք ներկայացուցիչներից և, բնականաբար, ճնշող մեծամասնութիւնը պատկանում է ռէակցիօն բանակին: Իսկ յայտնի է, որ այդպիսիների համար պետական ընդհանուր շահերը իսկապէս երկրորդական նշանակութիւն ունեն: Պետական Խորհուրդը հաւատարիմ մնաց իր նեղ դասակարգային, կաստայական շահերին, նպատակ դնելով պահպանել իր արտօնեալ դիրքը, իր տիրապետող դերը: Այդ պատճառով էլ նա գնում է ձեռք-ձեռքի տուած բիւրօկրատական կառավարութեան հետ:

Կառավարութիւնը չէր ուզում վերացնել զինուորա-դաշտային դատարանները, իսկ ժողովրդի ներկայացուցիչ Դուման որոշեց վերացնել և Պետական Խորհուրդը, առանց վարանելու, յարեց կառավարութեանը—մերժեց օրինագիծը:

Վերին և ստորին պալատները այդպիսով կանգնած են իրար դէմ. Պետական Խորհուրդը խոչընդոտ է հանդիսանում Պետական Դումայի գործունէութեան:

Ահա իրականութիւնը:

Ուշագրաւ է այդ մերժումը: Դումայի օրինագիծը, ինչպէս յայտնի է, երկու մասից էր բաղկացած. առաջինը վերացնում էր զինուորա-դաշտային դատարանները, իսկ երկրորդը հրամայում էր վերաքննել զինուորա-դաշտային դատարանների դատավճիռները սովորական դատարաններում:

Պետական Խորհուրդը մերժեց ամբողջ օրինագիծը առանց քննելու նրա դրական կամ բացասական կողմերը, առանց պատճառաբանելու և վերադարձնելու Դումային նորից մշակելու այդ օրինագիծը:

Եւ մի այդպիսի վերաբերմունքի շնորհիւ այդ կարևոր օրինագիծը ընթացք ստանալ գոնէ ներկայ սեսսիայում չէ կարող: Մինչդեռ նա կարևոր է հէնց ներկայի համար:

Մեր քաղաքական կեանքը ենթարկված է զանազան պատահարների, Դումայի բաղդն էլ մազից է կախված:

Եթէ Դուման արձակելու լինեն, յարութիւն չէ առնի նորից 87-րդ յօդուածի հիման վրա հրատարակված զինուորա-դաշտային օրէնքը:

Դրա համար ոչ մի երաշխաւորութիւն չը կար և չը նայելով որ նրանց ժամանակը լրանում էր ապրիլի 20-ին, այնուամենայնիւ Դուման կարևոր համարեց վերացնել նրանց օրէնսդրական ճանապարհով և այդպիսով հնարաւորութիւն չը տալ, որպէսզի կառավարութիւնը առաջարկէ Դումային միևնոյն օրէնքը վերահաստատելու:

Դուման իր նպատակին մասամբ հասաւ արդէն. կառավարութիւնը, եթէ մտադիր էր առաջարկել այդ օրէնքը, անկարող եղաւ:

Ճնշող է սակայն Պետական Խորհրդի վարմունքը. Նա առիթ է տալիս լուրջ կերպով անհանգստանալու Դումայի ապագայ օրինագծերի մասին՝ մի գուցէ նրանք ևս դատապարտվեն միևնոյն բաղդին:

Պետական Խորհրդի այդ տեսակ տրամադրութեան շնորհիւ ծանր կացութիւն է ստեղծվում Պետական Դումայի համար:

Եթէ նա շարունակելու լինի այնպէս վերաբերվել դէպի յաջորդ օրինագծերը, ինչպէս որ զինուորա-դաշտային դատարանի վերացման օրինագծի ժամանակ, Դուման ստիպված կը լինի կամ յարմարվել կառավարութեան հայեացքներին և կամ օրէնսդրական անգործութեան դատապարտել իրան:

Զառամեալների պալատի տուած օգուտը այդ է լինելու:

L.

ԴԻՊԼՈՄԱՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«Р. Сл.» լրագիրը ստացել է տելեֆօնով իր Պետերբուրգի թղթակցից հետևեալ տեղեկութիւնը.

«Մենք այսօր առիթ ունեցանք ծանօթանալու այն կարծիքի հետ, որը տիրում է Պետերբուրգի դիպլօմատիական խաւերում մեր ներքին դրութեան մասին:

Ի նկատի առնելով Ռուսաստանի և օտար պետութիւնների ներկայացուցիչների միջև արտաքին քաղաքականութեան վերաբերեալ կարևոր հարցերի մասին շարունակվող բանակցութիւնները, ռուսաց կառավարութիւնը վերջին օրերս քանիցս անգամ մանրամասն տեղեկութիւններ է հաղորդել օտարերկրեայ կառավարութիւններին երկրի դրութեան և կառավարութեան մերձաւոր դիտաւորութիւնների մասին. ուստի օտարերկրեայ դիպլօմատների հաղորդած տեղեկութիւնները պէտք է որ ճիշտ արտայայտութիւն լինեն ռուսաց բարձր խաւերի հայեացքների:

Օտարերկրեայ յայտնի դիպլօմատներից մէկը յայտնեց մեզ, որ, իր կարծիքով, Պետական Դուման ներկայումս կարող է շատ հիմնաւոր դերը բռնել, եթէ միայն աջողվի նրան «առանձնացնել» իր ձախ թևը: Ռուսաց կառավարութիւնը, նրա ասելով, աչալուրջ կերպով հետևում է ձախակողմեան կուսակցութիւնների գործունէութեանը և վճռել է մօտիկ ապագայում խանգարել նրանց գործունէութիւնը և պահանջել արտաքսելու ոչ միայն առանձին առանձին պատգամաւորներին, այլ և Դումայի ամբողջ խմբերին՝ նախապէս դատաստանական պատասխանատուութեան ենթարկելով նրանց: Պետական Դումայի համար այդ դէպքում մնում է երկու ելք. կամ մեծամասնութիւնը հարկադրված կը լինի համաձայնվել կառավարութեան պահանջներին, և այդ դէպքում հեռացված պատգամաւորները յետոյ կարող են փոխարինվել աւելի չափաւոր թեկնածուներով, կամ թէ Դուման հարկադրված կը լինի մեծամասնութեամբ միանալ իր յանցաւոր մասին, որից յետոյ նրան կարձակեն և անմիջապէս նոր ընտրութիւններ կը նշանակվեն:

«Յամենայն դէպս,—ասաց խօսակիցս,—մենք համոզված ենք, որ Ռուսաստանը կը մնայ սահմանադրական պետութիւն և բարձր իշխանութիւնը կիրագործէ իր նպատակը»:

ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ԼՕՆԴՕՆՈՒՄ

«Mirror» լրագրի աշխատակիցը Լօնդօնում խօսակցութիւն է ունեցել ռուսաց սօցիալիստների կօնգրէսի պատգամաւորներից մէկի հետ: Կօնգրէսի պատգամաւորը ասել է, որ, իր կարծիքով, ընդհանուր ապստամբութիւնը Ռուսաստանում անխուսափելիօրէն տեղի կունենայ երկու ամսից յետոյ:

Կօնգրէսի 200 անդամները, որոնց մերժեցին թոյլ տալ մնալու Դանիայում և Նորվէգիայում, կը գան հինգշաբթի օր, իսկ մնացեալ 200 պատգամաւորները կը գան 1—2 օր յետոյ:

Կօնգրէսը շաբաթ կամ կիրակի օր կը ձեռնարկի առաջին հարցի քննութեան, այն է՝ Պետական Դումայի մասին:

«Եթէ մենք, ասել է պատգամաւորը, կը գանք այն եզրակացութեան, որ Դուման մի որևէ օգուտ բերում է ռուսաց ազատութեան գործին, թէկուզ հէնց արտաքուստ, այն ժամանակ շատ լաւ է: Բայց եթէ գանք բացասական եզրակացութեան, այդ դէպքում մենք չենք գլանայ ոչնչացնել նրան անմիջապէս ընդհանուր ապստամբութիւն սկսելով: Ես կարծում եմ, որ այս վերջինը կը լինի մեր որոշումը: Եթէ ընդհանուր ապստամբութիւն յայտարարվելու լինի, այն ժամանակ մեծ արիւնհեղութիւն տեղի կունենայ: Այդ բանի առաջին քայլը կը լինի ընդհանուր գործադուլ քաղաքներում, գոյութիւն ունեցող իշխանութիւնների հրաժարեցումը, կօմմունաներ հիմնելը: Ամեն բան արդէն պատրաստ է: Մենք սպասում ենք միայն ազդանշան հրամանի»:

ՄԻ ՈՒՂՂՈՒՄՆ

«Մշակի» № 68 ում զետեղված էր «Մի բարեգործ» վերտառութեամբ քաղուածք «Լուսաբերից», Որովհետև բարեգործ անձը Բեսսարաբիայից է, մենք տեղեկութիւններ հաւաքեցինք հանգուցեալի բարեկամներից և գըտանք մի քանի անճշտութիւններ յօդուածում: Անդրոնիկ Իոաննէսկօն ամուրի է եղել և ապրելիս շատ չափաւոր կեանքով. հայերէն իմացել է լոկ ռումինահայերի բարբառը, բայց գրելիս է եղել ոչ հայատառ, այլ լատիներէն տրանսկրիպցիայով: Նա նախ հրատարակել է իր լրագիրը Պօլսում, ապա մի քանի տարի էլ Վարնայում. լրագրութեամբ պարապել է ոչ 25, այլ 10—12 տարի:

Նրա կալուածները գտնվում են Կագուլում (աւան Բեսսարաբիայում), բայց վերջերս բոլորը նա գրաւ է դրել. ունեցել է 300,000 ր. չափ կարողութիւն՝ կանխիկ փողով և գրաւաթղթերով, ևս Օդեսսայում մի տուն: Նրա ազգականներից ներկայումս կենդանի է մի քեռաղջիկը Պօլսում, որը մի քանի տարի առաջ հիւր է եկած եղել իր մօտ երեխաներով:

Անդրոնիկ Իոաննէսկօն առաջ է գնացել ինքնազարգացմամբ. ծառայել է Ռումինիայում նախ իբրև դատական ոստիկան, ապա որպէս մասնաւոր փաստաբան, և հէնց այդ ժամանակ է դիզել իր հարստութիւնը: Անցեալ տարի նրան Օդեսսայի մի հիւրանոցում կողոպտել են և տարել մօտ 60,000 ր.:

Նրա «Բաղդատական բառարանը» նրա idée fixe-ն է. թէև իմացել է միմիայն ռումիներէն և հայերէն, բայց թերթ հրատարակելիս, համաձայն հնաւանդ աւանդութեան, եկել է այն համոզման, որ անդրջրհեղեղեան լեզուն հայերէնն է եղած և բոլոր միւս լեզուները հայերէնից են ծագել, ուստի և ձեռնարկել է բառարանի կազմելուն, ապացուցանելու համար, որ բոլոր լեզուների արմատները հայերէնից են սկիզբ առել: Այդ բառարանը արդէն պատրաստ է տպագրութեան համար, կազմված է մի շարք հատորներից և նրա տպագրութեան համար տասնեակ հազարներ է պահանջվում, մինչդեռ գիտական նշանակութիւն չունի, եթէ պ. Բասմաջեան չը կերպարանափոխէ: Գուցէ այդ միտքը ծագել է նրա մէջ Վենետիկում, ուր մնացել է մի առ ժամանակ:

Նրա ամենամօտ ընկերոջ վկայելով (կալուածատէր Եսայի Օհանով), նրա նպատակն է եղել իր բոլոր հարստութիւնը այդ բառարանի հրատարակման և տարածման վրա ծախսել. Եւ որովհետև դա ապարդիւն ծախս է, լաւ է այդ առաջարկը թողնել, այլ հանգուցեալի թողած հարստութիւնից գոնէ մի չնչին մասը հանել իր չքաւոր քրոջ երեխաների համար, քանի կտակը որբերի և չքաւորների օգտին է արած:

Յ. բ. Աբրահամեանց

Հինչեշտ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Բարսում գիւղ, (Զանգ. գաւ.) մայիսի 6-ին

Մեր գիւղացին դեռ անկանոնութիւնների նախօրեակումն է քաշ տալիս իր գոյութիւնը: Մի ամսից յետոյ արդէն կըսկսվի հունձը Թուրքական մասերում և հայ գիւղացին այսօրվանից իսկ վճռել է, ինչ գնով էլ լինի, թէկուզ հէնց կեանքի ռիսկով՝ գնալ հունձ անելու: Ուրիշ ոչ մի ելք չը կայ նրան դուրս գալու այն դժուար կացութիւնից, որի մէջ նա խեղդված է այսօր: Հայկական մասերում հազիւ հազ երեք ամսից յետոյ սկսվի հունձը. սակայն ինչպէ՞ս սպասել, երբ ոչ թէ ամիսները, այլ օրերը տարիների չափ դանդաղ են անցնում. ինչով սրբէ իր զաւակների արտասուքը, երբ վաղուց է նա տնտեսապէս քայքայվել ու քամվել և երբ վաղուց է նա իր գրպանի վերջին կօպէկին գնաց բարևն ասել: Առանց չափազանցութեան՝ տնտեսական երկունքի մէջ ենք: Անթիւ կարիքը ու մտատանջութիւնները մելամաղձոտ են դարձրել գիւղացուն. Նրա դէպի կեանքը ունեցած յոռետեսութիւնը ցայտուն կերպով արտայայտվում է ակներև. և նման պարագաներում դըժուարանում էք որևէ մխիթարական բան խօսել, թէկուզ հէնց ակամայ: Երբեմն փորձում էք հասկացնելու նրան գիտութեան, տնտեսական վերջնական յաղթութեան մասին, աշխատում էք ոգևորել նրան ապագայի հեռանկարով, օրօրում գալոց օրերի ազատութեան յոյսերով, որ ժամանակը իր վազող

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԷՆ

Լօնդօն, 12 մայիսի

Այս պահուս աչքի առաջ ունիմ Ամերիկայի Պօսդըն քաղաքը հրատարակուող անգլ. «Armenia» հանդէսի ապրիլի համարը:

Կանոնաւորապէս չեմ ստանար զայն, սակայն, իւրաքանչիւր թիւ որ տեսնեմ, միշտ տեսակ մը շահեկանութիւն կը պարունակէ, հոգ չէ թէ հոն զետեղուած յօդուածներէն կամ գաղափարներէն ոմանց համակարծիք չըլլանք մենք: Ամէն մարդ իրաւունք ունի որոշ ուղղութեան մը հետևել և իր մտադրած գործը այդ կերպով յառաջ վարել: «Armenia», իր վրայ ունենալով շարք մը կրօնական խառնուրդով անձնաւորութիւններ, բնական է, որ հզօր ջատագով և պրօպագանդիստ մը հանդիսանայ խոհեմ քաղաքականութեան, իրաւունքի, արդարութեան և ճշմարտութեան ինքնաբեր յաղթանակին՝ համոզիչ քարոզներով, և այլն: Անոնց հաւատքն է այդ, և մեզ կը մնայ իրենց անկեղծութեան վրայ հիանալ, առանց զանոնք վարկաբեկել կամ նշաւակել փորձելու: Նոյնքան իրաւացի է Փարիզ հրատարակուող «Pro Armenia»-ի խմբագրութիւնը, որ չի հաւատար շատ տիրացուական աղերսներու և իր խմբագիրը բնորոշող ազդու և կորովի գրչով մը միայն կը յարձակի հայութեան թշնամիներուն վրայ, ըլլայ դա սուլթանի կամ ցարի կառավարութիւնը: «Pro Armenia» կամ իր խմբագիրը, հայութեան ուղղած պահերնուն իրենց թելադրանքները, խրատած են շարժուն կացութեան մէջ միայն միշտ, կազմ ու պատրաստ ըլլալ, եւրոպական անճարարութիւններուն վրայ շատ յոյս չը դնել, հայլն, մինչ Պօսդընի «Armenia»-ն, որչափ որ ես կրցած եմ հետևիլ, կը սոսկայ հայութեան շարժումի խօսքէն՝ նամանաւանդ զինական տեսակէտով՝ և իր լաւագոյն յորդորն է հայութեան՝ եւրոպացի դիւանագիտութեան գութը շարժել, ցոյց տալ, որ մենք յառաջադէմ ու ժրաջան ժողովուրդ մըն ենք և արժանի ազատագրութեան, որովհետև այդ միայն կրնայ վերջ մը դնել մեր անտանելի կացութեան:

Նպատակ չունիմ բաղդատական քննադատութեան մէջ մտնել այստեղ:

Քանի որ հայութենէ անկախ մեքենաներ են անոնք, թող գործեն իրենց յարմար դատած սիստեմով, բաւական է, որ հասածը չարիք մը չէ՝ եթէ ոչ այ բարիք մը:

Անգլիերէն «Armenia»-ի վերջին ապրիլ համարը, սակայն, իր աւանդութիւնը բեկանեց (գոնէ որքան ատեն որ ես հետևած եմ) և նախայօդուածը, «Անխուսափելին» վերնագրով և Քրիսդին Եէգըր ստորագրուած, տեսակ մը Իւրպէն-Կօհէնական հայութեան ուղղած կոչերուն շունչը կը փչէ:

Յօդուածագիրը կընդունի թէ հայերս չափէն աւելի խնդրեցինք, լացինք, ողբացինք և արդարութեան ու իրաւունքի բնական յաղթանակներուն վրայ յոյս դրինք: Չափէն աւելի Ժան-Ժակ-Ռուսօյական ներշնչումներով «ույժը իրաւունք չէ» աղաղակելով, սպասեցինք որ մեր արդար դատը, քրիստոնեայ մարդասէր աշխարհին սիրտը շարժելով, առանց արիւնի, առանց կռիւի, առանց բռնութեան յաղթանակուի,—ու այսօր հոն ենք՝ ուր էինք երէկ, և վաղը ևս պիտի գտնուինք միևնոյն դրութեան մէջ՝ որուն մէջ ենք այսօր՝ և թերևս աւելի գէշը:

Ընդունելով հանդերձ յօդուածին մի քանի կէտերուն սխալականութիւնը, որու մասին ուրիշ ատեն մը թերևս առիթ ունենամ անդրադառնալու, չեմ կրնար զսպել ինքզինքս այդ յօդուածը մի քանի յապաւումներով թարգմանաբար յառաջ բերել այստեղ, որ տարակոյս չունիմ թէ մեծապէս շահագրգռէ կրնայ համարուիլ՝ լսելով օտարականի, և այդ ալ ամերիկացիի մը, այս բաւական original տեսութեան ու թելադրումը հայութեան:

—

—«Ճար մը: Ճար մը: Ո՜հ, ճար մը գտէք, կամ ստեղծեցէք հատ մը՝ արիւնող հայրենիքս փրկելու»[*]: Այս է տխուր յանկերգը՝ հայ ծակւատ աղջկան մը արիւնող սրտի գոչին: Իր բունէն վարուած արծուի մը բարկացած ճիչը չէ այդ, թակարդուած առիւծի մը յանդուգն մռնչիւնը չէ, այլ գանգատող ողբը անօգնականի մը, քարուքանդուած փարախի գառնուկի մը: Որքան գթաշարժ է այդ աղաղակը անոնց՝ որ կը լսեն, սակայն քիչեր կան որ կը լսեն զայն: Աշխարհը չափէն աւելի ինքնաղբաղ է՝ եղբօր մը անոք կոչը ունկնդրելու: Այսօրուան աշխարհին մէջ տեղ չը կայ անօգնականին, անյոյսին ու անույժին: Եւ, յիրաւի, երէկուան աշխարհին մէջ ալ տեղ չը կար, ու վաղուանին մէջ ալ գրեթէ միևնոյնը պիտի ըլլայ: Ազգերու յեղաշրջումը, առանց ոևէ տարակոյսի, պիտի շարունակուի միևնոյն սկզբունքին վրայ՝ ինչպէս անցեալ շրջաններուն մէջ,—ույժը իրաւունք է: Հզօրները ազգեր պիտի կազմեն իրենց համար և երկիրը տիրապետեն, մինչ տկարը պէտք է հպատակի: Շատ քիչ ազատութիւն կամ արդարութիւն կայ այս աշխարհին մէջ, ազգային թէ անհատական, որուն համար անհրաժեշտ չըլլայ կռուիլ ու սուղ վճարք տալ: Հայկական հարցը նկատուած պահուս՝ ինծի այնպէս կը թուի որ մէկ և միմիայն մէկ լուծում կայ: Ույժը պէտք է վաստկի:

«Armenia»-ի վերջին համարներէն մէկուն մէջ պր. Քլէմընդ կըսէր. «Ես այնքան պինդ հաւատք մը ունիմ իրաւունքի յաղթական ույժին վրայ, պարզապէս որովհետև իրաւունք է, այսինքն՝ մարմնացումը մը ճշմարտութեան, արդարութեան և մարդասիրութեան, որ կը հաւատամ այնպէս՝ ինչպէս չեմ հաւատար ուրիշ credo-ի մը՝ որ այն միշտ կը յաղթանակէ»: Այս հաւատքը թերևս կենսատու կայծն է այն անմեռ հաւատքին ու յոյսին՝ որ պահած է հայ ազգը հարիւրաւոր տարիներու հալածանքի և փորձուած բնաջնջումի ընթացքին, բայց դա նոյնպէս շղթան է որ կապած է զիրենք անյոյս գերութեան մէջ և գուցէ յափշտակած իրենց ազատութեան և ազգային կեանքի հարիւրաւոր տարիներէն: Շատերը պարտաւորութեան հաւատալ թէ՝ իրաւունքը շատ քիչ անգամ, եթէ երբէք՝ կը յաղթանակէ, որ այս աշխարհին մէջ ոչ մէկ բան բացարձակապէս իրաւացի է եղած և ոչ ալ պիտի ըլլայ: Շուրջերնիդ նայեցէք: Ո՞ւր են ճշմարտութիւն, արդարութիւն և մարդասիրութիւն: Թաղուած են ատոնք: Երազներ են: Կրնայինք յարուցանել զանոնք մէկ օրէն կամ մարմնաւորել մէկ օրէն, եթէ պատրաստ ըլլայինք, սակայն չենք: Կան մէջերնիս, անտարակոյս, մեծ մարդիկ՝ որ խորթ մը չեն հանդիսանար այդ մըտացածին կացութեան մէջ՝ երբ աշխարհը միացած ընդհանուր եղբայրութեամբ մը և պատերազմներ հեքիաթներ կը թուին, բայց տակաւին դարեր է հարկաւոր մինչև որ քաղաքակրթութիւնը բարձրանայ այն իրականացման՝ որ արիւնհեղութիւն ու տառապանք էական չեն մարդկային յառաջդիմութեան համար:

Անհնար է, ուրեմն, հաւատալ թէ Հայաստանի դատը պիտի ուղղուի ինքնին՝ որովհետև արդար ու իրաւացի է այդ: Եթէ Հայաստանի դատը իրաւացի է այսօր, իրաւացի էր նոյնպէս հարիւրաւոր տարիներ առաջ.. Միևնոյն գրողը կըսէ.—«Եթէ պատմութիւնը կը սովրեցնէ բան մը՝ սա է թէ՝ նուաճումը չի նուաճեր, թէ բռնութիւնը իր մտադրած գործին եղծումն է, թէ արիւնով ոռոգուած պատերազմի սերմերը լոկ կարթաղրին ատատ բերք մը պիտի ու թունաւոր անպիտան խոտերու՝ յառաջդիմութեան ոտքերը թնճուկելու»: Այս կը նշանակէ թէ հայերը պէտք է հոն կենան պատերազմէ ու բռնութենէ. սակայն պատերազմ չը կայ Հայաստանի մէջ ու հալածանքի և բնաջնջման սերմերը սերմանուած ու արիւնով ոռոգուած են հարիւրաւոր տարիներէ ի վեր. և յառաջդիմութիւնը, անկարող նոյնիսկ կնճռոտ քառսին մէջէն սողալու, խոյս տուած է՝ թողլով ետին անապատ մը: Ո՞վ պիտի ըսէ թէ այն ռազմադաշտը, որուն վրայ Հայաստան կը շահի իր ազատագրումը, հսկայ քայլ մը չէ դէպի յառաջդիմութիւն: Պատերազմի սերմերը թող սերմանուին քանի մը տարիներ, այնքան թանձր, որ ուրիշ ամեն ինչ խեղդեն, և թող ոռոգուին առատ ազնիւ արիւնով ու այդ պիտի հասի ուրախութեան հասունքներով. արիւնը՝ որ այլապէս պիտի հոսի փշոտ գետներով...

Հայուն պիտի ըսէի ես.—«Ձեր հարցը պետութիւններու կողմէ չի կրնար լուծուիլ. անոնք մերժեցին լուծել. չէք կրնար լուծել զայն իրաւարարութիւնով (arbitration), Թիւրքը այդ լեզուն չի հասկնար. նա դարերով իր արիւնարբու բարբարոսութեան մէջ կապրի և իրեն հետ իրաւարարութիւն ընելու միակ լեզուն այն է որով ինք կը խօսի ձեզի: Ինչո՞ւ դեռ ևս կոչ ընել պետութեանց: Քաղաքակիրթ աշխարհը անշուշտ հովանաւորութիւն կը պարտի անկեալին. բայց քաղաքակրթուած է աշխարհը: Ո՛չ ալ կը կարգադրուի այդ երիտասարդ թիւրքերուն հետ միանալով. կրօնական տարբերութիւններ կը ժխտեն այդ, և, առ առաւելն, թիւրքը յառաջադէմ չէ: Թիւրք քոնթրոլը կործանեց արաբական քաղաքակրթութիւնը և քանդեց ամեն ազատ և ազատական հաստատութիւն: Եթէ կուզէք վերականգնել ձեր ազգը, պէտք է ընէք այդ Հռովմայ նման: Ասի կոչ մը չէ դէպի արիւնհեղութիւն, այլ կոչ մը դէպի հայրենասիրութիւն, վերանորոգումը գեղանի երկրներու և դադարումը արիւնհեղութեան:

«Սակայն, կըսէ հայը, քանի թիւրք է պաշարած մեզմէ իւրաքանչիւրը. չենք կրնար պաշտպանել ինքզինքնիս»: Ա՜հ, անշուշտ երկչոտ ռազմիկը յաղթական կռուի մը գացած չէ երբէք: Մարդը՝ որուն շնորհուած է իր գեղեցիկ երկիրը իրեն՝ իր հրաշած պահուն՝ անծանօթ է պատմութեան... Վախկոտը անարժան է իր հայրենիքին: Ռազմասէր ոգին սառեցուցիչ չէ... Եթէ Հայաստան անունը նշանակութիւն մը ունի հայերուն, իրենց տեղը շարժման մը առաջին շարքերուն մէջն է, որուն համար իրենց զաւակները պիտի օրհնեն ու պատուեն զիրենք, ու աշխարհ պիտի յարգէ զանոնք...

Ու մինչ այս, այն օգնութիւնը ՛որ հայերը այժմ ի զուր կը խնդրեն, կրնայ գալ առանց աղաչանքի, ինչպէս որ Ֆրանսա մեզի օգնութեան հասաւ՝ մեր անկախութեան կռուին մէջ: Երբ Թրքական այս բարբարոսութիւնը՝ որու ներքև հայերը այնքան տառապած են, վերանայ, այն ատեն ժամանակ է սուրը վար դնելու:

—

Այս յօդուածը արտագրելով այստեղ, նպատակ չունիմ հայրենակիցներուս խրատել literatim հետևիլ իր բովանդակութեան: Եթէ այդ խանդավառ անձնաւորութիւնը թէթև գաղափար մը իսկ ունենար մեր ազգային ճակատագիրը ձեռք առած շարք մը բախտախնդիրներու կեանքին ու գործունէութեան, տարակոյս չունիմ որ իր միակ խօսքը պիտի ըլլար հայուն—«Արժանի էք ինչ ալ կրէք, քանի որ 10 տարուայ դառն փորձառութիւնը տակաւին ձեզ չէ զգաստացուցած»:

Սիրուն և ասպետական խօսքեր են յունական դիւցազներգութենէն հատուածներ բերելով՝ կանչել թէ՝ ինչ այնքան քաղցր է որքան ինքնագլուխ կռուիլ՝ ապրիլ կամ յաւէտ կորչիլ... Այո, սիրուն են այդ խօսքերը՝ երբ հայ կռուող ույժի, մարտիկ ու պատրաստ կուսակցութեան անունը կրող բան մը ունինք, մինչ այսօրուան մեր խնամատար ազգային հսկիչները երկրին իսկական կացութեան անծանօթ ըլլալէ զատ՝ թերևս օրինաւոր քարտէս մըն ալ չունին դէմերնին. միւս կողմանէ, քրտնաջան աշխատաւորներու քովէ-քով բերած կոպէկները, սենտերն ու սանտիմները հազիւ հազ կը բաւականանան կոր հին ու նոր աշխարհի մեր ազգապետ ուխտաւորներուն պէտքերը գոհացնել, որոնց քանակը, իւրաքանչիւր կուսակցութեան մէջ, կարծուածին չափ ալ փոքր չէ: Այս բոլորին հանդէպ, երբ վերոյիշեալ տողերը կը կարդանք օտարի մը կողմէ մեզի ուղղուած, չենք կրնար զսպել ինքզինքնիս ծիծաղ մը և այն բնական մտածումը որ այս անձը մեզի «իշոց դրախտը» առաջնորդել կուզէ: Եւ այս օտարականներու խրատներն են որ,—թէև բոլորովին անկեղծ սրտերէ բըղխած—դեռ առաջին օրերէն մեզ մոլորեցնել տուած են մեր աչքի առաջ ունեցած աղաղակիչ իրականութիւնը և ցնորական թևերով տարած վերացականութեան գիրկը, շուտով, ի հարկէ, առաջին հիասթափումով, նորէն պաղ մութ քարոզ իջնելու:

Առաջին առիթով մը պիտի ջանամ մի քանի դիտողութիւններ ընել մեր արտասահմանեան հայ յեղափոխական կուսակցութիւններու անցեալ և ներկայ վիճակին վրայ:

Մինաս Ցոլակ

---

[*] Յօդուածագիրը այս պարբերութիւնը առած է միևնոյն հանդէսի նախորդ համարներէն մէկուն մէջ հրատարակուած ամերիկահայ դիւանի օրիորդի մը նամակէն, որ խառնուրդ մըն է աղերսի, լացի, ողբի, բողոքի, արհամարհանքի ու վրէժի: Մ. Ց.

և եթ ընդգծած ուղիով պէտք է ընթանայ, մինչև որ նա տնտեսապէս ու մտաւորապէս կազմակերպուի, որ վաղ թէ ուշ նա իրական տէր ու տնօրինող կը լինի ազատ գիւղացու ազատ իրաւունքների: Մի խօսքով ճգնում էք փարատելու նրա յոռետես հայեացքը ապագայի վերաբերմամբ: Սակայն նա իր բէալ ռամկական փիլիսոփայութեամբ մէկիկ-մէկիկ փաստեր շարելով՝ կարծէք ձեզ հեգնում է.— Ուր է, երբ կը լինի այդ. տուէք երեխայիս մի կտոր հաց, որ այսօր ապրի մինչև ձեր սպասելիք երջանկութիւնը,—գոռում է նա ջղային դարձած.—ազատեցէք մեզ մինչև վիզներս թաղուած պարտքից, հեռու քշեցէք մեզանից անկուշտ խնամակալ-վաշխառուներին ու առաջնորդներին. Էյ, ախպեր, մեր ջանը տէրտէրից ու իշխանից է էրված, դրանք են մեր տունը քանդողը. մէկը եկեղեցու անունով է մեզ պլոկել, միւսը պրիստաւի ու ստրաժնիկի անունով կողոպտել. մէկն իր Աստուածն է ուրացել, միւսը իր խիղճը կորցրել, մէկն իր անմիտ բանադրանքով է իր հմայքը մութ գիւղացու վրա պահպանել, միւսն իր անիշխան մտրակի ու տոկոսի սպառնալիքով անպատիժ շահատակութիւններ գործել: Արդեօք հանդերձեալ կեանքում գոնէ կազատվե՞նք նրանցից թէ՞ այնտեղ էլ պէտք է կաշառքը մթին տեղը լոյս տայ...

Կրկին խօսում էք, որ ապագան գիւղացիութեանն է պատկանում, որ դրանք չարիքներ են ժամանակի ընթացքում իրանք իրանց ոչնչացող: Չէ, պնդում է նա, ափսոս էք, ջահիլ ջիւան ջանդ իզուր մի փչացնէք, գնացէք ձեր արեւի ճէնն ածեցէք, մի մարդով ինչ կարելի է անել, ափսոս էք, ես փորձված եմ, դուք անփորձ էք դեռ.—կտրուկ կերպով խորհուրդ է տալիս:

Այսպէս գիւղացու մէջ արեան ու մարմնի չափ համոզմունք է դարձել, որ անկարելի է ներկայ վերին աստիճանի տնտեսական սուղ դրութիւնից ազատվելը:

Եւ դուք ճշմարտութեան տապանակը շալակած նետվում էք, թէկուզ յաղթութեան հէնց նուազ շանսով՝ ասպարէզ, խօսում ու զարնըվում տէրտէրի ու վաշխառուի, բէգի ու քօխվի, անիրաւի ու կաշառակերի հետ, անհաշտ կռիւ մղում գեղջուկի ընտանեկան պատիւը սրբապղծող ասպետների ու աւազակութեան ձենաշնորհը վայելող շայկաբաշիների դէմ, որոնք մատաղ սերունդը այլասերման ճանապարհին են ուզում հասցնել: Այս պայքարի ընթացքում վերջնականապէս այն համոզմանն էք յանգում, որ բացարձակ ասած ճշմարտութիւնը գոյութիւն չունի, որ իսկապէս արդարութիւնը մի վարդ է շրջապատված անթիւ փշերով: Այս բոլորի հետ միևնոյն ժամանակ հոգեկան անհուն կորովով նուիրվում էք մատաղ սերնդի կրթական գործին, պատրաստելու ապագայ հասարակութեան ու գիւղացիութեան պիտանի ու ազնիւ անդամներ:

Եւ ձեր գործունէութեան ասպարէզում վաստակում էք անհաշտ թշնամութիւն ու ատամների կրճտոց, իսկ մի փոքր դեռ նոր ծլած համակրութիւն, որ ձեր ապագան նուաճման գրաւականն է:

Յ. Երիցեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

Մայիսի 8-ին

Մուկն ինքը մի բան չէ, բայց ընկնելով կարասը, մուռտառում է: Թուրքաց թաղը անցնող չորս մութ հայերը իրանք մի բան չեն, բայց մի քանի ամիս է նրանք իրանց տգեղ վարմունքներով խանգարում են Գանձակի հայերի հանգստութիւնը:

Երէկ, ժամի 4-ին, անձնական գործերով Թուրքաց մասն են անցնում Բանանց գիւղացի դպրին Մատթէոս Տէր-Յարութիւնեանը և երևանցի Խաչատուր Խաչատրեանը:

Շահ-Աբբասի հրապարակում, բազմաթիւ ականատեսների ներկայութեամբ, Մատթէոսին մօտենում են դարդաղուեցի ստրաժնիկ Բուղդանը և նրա համախոհ, ոչ մի պաշտօն չունեցող պարսկեցի Պետրոսը և գանձակեցի երբեմն կառապան Տիգրանը, բռնելով Մատթէոսի օձիքից, քաշ են տալիս դէպի Թուրքաց մասի խուլ անկիւնները: Մատթէոսը ամբողջ ուժով դիմադրութիւն է ցոյց տալիս, բայց և այնպէս չորս ուժեղ ձեռքերը նրան քաշ տալով տանում են Թուրքաց մասի դէպի խուլ անկիւնը: Տանելու ժամանակ ճանապարհին հանդիպում են Մատթէոսին ծանօթ Թուրքերից Բէլբալայի Ղասումը և նաւթավաճառ Հասանը, և առաջարկելով դրամական գրաւական նրան բաց թողնելու, մինչև անգամ Բէլբալայի Ղասումը առաջարկել է, որ փոխարէնը պահեն իր որդուն և նրան բաց թողնեն կամ տանեն ոստիկանատուն, սակայն հրէշները բոլոր առաջարկութիւնները մերժել են:

Մատթէոսին քաշ տալով տանում են մի Թուրքի թէյատուն և բանտարկում:

Կէս ժամից յետոյ, ըստ երևոյթին վերոյիշեալ Թուրքերի բարեխօսութեամբ և պահանջմամբ՝ Մատթէոսին թէյատնից հանելով տանում են ոստիկանատուն և նրա վրա բարդում զանազան զրպարտութիւններ:

Բարեբաղդաբար պրիստաւը ոչ իր նախորդների նման, փոխանակ բանտը ուղարկելու նրան, կառքով ուղարկում է հայոց մասը, զրպարտութիւն համարելով նրա վրա բարդած յանցանքները:

Մատթէոսը այս մասին յայտնում է երկրորդ մասի պրիստաւին, որը գնալով դէպի վայրը՝ կազմում է արձանագրութիւն:

Մոռացայ յիշատակելու, որ Մատթէոսին տանելու ժամանակ ճանապարհին հարիւրաւոր Թուրք հայ ականատեսների ներկայութեամբ, այդ փչացած հայերը անլուր հայհոյանքների տարափ են թափել հայերի հասցէին, չը խնայելով մինչև հայերի սրբութիւնները... Նրանք բարձրաձայն սպառնացել են, որ մօտ է այն վայրկեանը, երբ բոլոր Գանձակի հայերին իրանք սրի են մատնելու:

Ովքե՞ր են այս հրէշները, անշուշտ ձեզ կը հարցնեն հետաքրքիր ընթերցողները:

Դրանք հայ ազգութեան տականքներն են, որոնց թիւը, դժբախտաբար, այնքան շատացել է:

Դրանցից Բուղդանը մի դասալիք զինուոր էր, երկար ժամանակ իշխանութիւնից փախստական դարձած. նա ծառայութիւնից և իր գործած մի քանի յանցանքների պատժից ազատվելու համար, ընտանիքով անցաւ Թուրքաց թաղը, պատրաստակամութիւն յայտնեց Մուհամմէդի կրօնը ընդունելու:

Թուրքերի միջնորդութեամբ իշխանութիւնը նրան թէև ստրաժնիկի պաշտօն տուեց, բայց նա իր ծառայութիւնը կատարում է Գանձակի հրապարակում: Նրա ցուցմունքներով բանտ նստեցին մի քանի հայեր, որոնք մեղադրվում են իբրև քաղաքական յանցաւորներ այս կամ այն կուսակցութեան պատկանելու համար:

Նրա ընկեր կարսեցի Պետրոսը հայոց մասում կատարում էր գիշերապահի պաշտօն. լուրեր էին պտտում, որ նա մօտ յարաբերութեան մէջ է գտնվում Բուղդանի հետ. նա բացարձակ միացաւ Բուղդանի հետ Լօլաճէի օրով, երբ հետ իբրև նրա աջ կուռը սկսեցին խուզարկել հայոց թաղը և բանտարկել մի քանի հայերի:

Տիգրանը մի կառապան է. պատմում են, որ սա մշտական մեծ հաճոյքով պատմելիս է եղել Բուղդանի գործերը և նրա այն յարգանքը, որ վայելում է Թուրքերի և ոստիկանութեան շրջանում:

Երկու շաբաթ առաջ նա մեղադրվում էր հաւագողութեան մէջ. պատժից և պատասխանատուութիւնից խուսափելու համար նա անցնում է Թուրքաց մասը, ուր գրկաբաց ընդունվում է ինչպէս Թուրք մութ տարրերի, նոյնպէս Բուղդանի, Պետրոսի և Յակոբի կողմից:

Այս չորս մութ անձինք, օգտվելով ոստիկանութեան և Թուրքերի բացարձակ հովանաւորութիւնից, անպատիժ և համարձակ նորանոր չարիքներ են ստեղծում հայերի գլխին: Նրանք ունին իրանց հայ համախոհները, որոնք հայոց մասից զանազան լուրեր են տանում նրանց համար:

Ներկայումս քաղաքիս առօրեայ խօսակցութեան նիւթը այդ հրէշների գործած բազմաթիւ չարիքներն են. շատ հայեր դրանց թակարդը չընկնելու համար անկարող են անցնել Թուրքաց մասը, երկիւղ կրելով նրանցից:

Որքան ուղիղ է, չը գիտենք, նրանք իրանց մօտ գնացող եկող հայերի միջոցով հայերից պահանջներ են արել, հակառակ դէպքում սպառնացել են տները խուզարկելու կամ նրանց ձերբակալել տալու:

Մեզ բոլորովին չէ զարմացնում այդ սևահոգի մարդկանց արարմունքները, բայց մեզ անչափ զարմացնում է և լուրջ մտածողութեան առիթ է տալիս իշխանութեան տարօրինակ վարմունքը, որ հալած իւղի տեղ է ընդունում այդ մութ անձնաւորութիւնների ցուցմունքները և նրանց աջակցութեանը կարօտում:

Գանձակի հայ հասարակութիւնը այս դէպքերի առիթով խիստ յուզվել է և մտադիր է այս մասին գանգատվելու փոխ-նահանգ. Կօվալիօվին, որպէսզի նա հնարաւորութիւն տայ հայերին ազատ անվտանգ անցնելու Թուրքաց մասը կամ կայարան գնալու:

Իսկապէս որ այս հարցն է միայն հայերին զբաղեցնողը:

Ամեն ազգի մէջ կան անբարոյական, տգէտ, փչացած մարդիկ. Թուրքերից երկուսը անցեալներում անցան հայոց մասը և իրանց պատրաստակամութիւնը յայտնեցին իրանց հաւատակիցներին ճնշելու. հայերը նրանց վարմունքը ամօթալի են համարել և ընկերաբար խրատելով, աշխատել են յետ դարձնել իրանց հաւատակիցների մօտ: Ինչո՞ւ նոյնը չեն անում մեր դրացիները:

Ազգաղաւ Բուղդանը և իր ընկերները այսօր Պօստի փողոցում, երկու հայերի բռնելով ուզում են տանել իրանց հետ, բայց վրա հասնող զինուորները ազատում են: Մի քանի հայեր նորից պահանջներ ստացան այդ սրիկաներից, հակառակ դէպքում սպառնում են վրէժխնդիր լինելու: Այսօր հայերից՝ պարագլուխ ունենալով պ.պ. Վերդեանին, ներկայացան նոր ոստիկանապետ պ. Վօսկրեսենսկուն, գանգատվեցին, իրանց անել դրութիւնը յայտնելով, որ իրանց համար միանգամայն անկարելի և վտանգաւոր է դարձել Թուրքաց մասը կամ կայարան գնալ, երկիւղ կրելով չորս ազգդաւների թակարդն ընկնելուց: Ոստիկանապետը խոստացաւ դրա առաջն առնելու:

Այս գիշեր առատ անձրև տեղաց Գանձակում և նրա շրջակայ գիւղերում. չորութեան վտանգին ենթարկված այգիները կենդանութիւն կը ստանան:

Ա. Ս.

ՇՈՒՇՈՒ ԿԵԱՆՔԻՑ

Շուշի, մայիսի 3-ին

Կալուածների տաժան տարին ռուս բիւրօկրատիկ կառավարութիւնը փակելով Շուշու Թեմական դպրանոցը՝ փակեց և նրան պատկանող միակ տպարանը: Այժմ, երբ կրկին վերաբացված է, դպրանոցիս հոգաբարձութիւնը խնդրագրով դիմել է բարձրագոյն ոստիկանութեան և յայտնել, որ մտադիր է վերաբանալ և՛ տպարանը: Եւ կարծելով թէ նա (ոստիկանութիւնը) ոչ մի արգելք չի հանդիսանայ իրան, սարքել է տալիս տպագրական մեքենան ու սկսում տպագրել դպրոցական մի քանի ազդեր: Սակայն երէկ, մայիսի 2-ին, պրիստաւի օգնականը մի ինչ որ հայ օկօլօդօչնու հետ գալիս ու կնքում է տպարանը, պատճառաբանելով, թէ ինչու չեն սպասել «ամենակարողի» թոյլտուութեան: Հոգաբարձութիւնը շուտով թոյլտուութեան վերջնական իրաւունքը կը ստանայ երևի: Որպէսզի տպարանը երկար ապրել կարողանայ ու փոքր ի շատէ հեռու մնայ բռնակալ թաթի անախորժ պ. պ. հովանաւորութիւնից, խորհուրդ կը տայինք հոգաբարձուներին որ զանազան մութ ու կասկածելի անձնաւորութիւնների մուտքը առժամանակ խափանել արգելել, որոնց յաճախակի «մերս դուրս» անելը վերջին ժամանակներս այնքան նկատելի էր այնտեղ...

Յովսէփ

ՄԵՐ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ Պ. ԱՐՏԱՇԷՍ ՄԵԼՔՈՆԵԱՆԻՆ

(Նամակ խմբագրութեան)

Դուք փախաք միջնորդ դատարանից, պարոն Արտաշէս... Դուք, որ ամիսներ առաջ փակված «Ժամանակ»-ի էջերը ողողեցիք ձեր «աղաւաղված փաստերի» անհագին չեղջակոյտով: Դուք, որ մեզ վրա կատաղի յարձակվելով, այնքան վստահ՝ պղտորել ուզեցիք ընթերցող հասարակութեան միտքը, ջանալով հաւատացնել, որ երբ թէ դուք էք պահանջում, իսկ մենք բողոքաւորներս՝ ոչ: Դուք, որ կաշուից դուրս եկաք ձեզ միանգամայն չքմեղ ու արդար ձևացնելու համար...

Եւ այդ երբ... այն ժամանակ, երբ մեր վկաները ցրված օտար քաղաքներ՝ նրանց վերադառնալու մասին հէչ չէինք էլ մտածում, նոյնիսկ երազում:

Համարձակ էիք դուք այդ օրերում, չափազանց համարձակ. այնքան, որ նստած Գանձակ, Թիֆլիս, այստեղ—Շուշում, մեզ վրա էիք սրել թէ հոգաբարձուներին, թէ տեսչին և ուսուցիչների մեծամասնութեան և թէ մեր ընկերներին, որոնք այնքան «խիզախ» պահանջում էին ձեզ համար «դատ, արդարութի՜ւն», կարծելով թէ դուք արժանի էք դրան...

Եկան վկաները... Անակնկալ դիպուածը սառը ջուր մաղեց ձեր գլխին: Երկրորդ անգամ հրաւիրեցինք միջնորդ դատարան, որտեղից պիտի կարդացվէր ձեր դատավճիռը:

Խայտառակ կեանքի և բարոյական մահի ծանր խնդիրն էր դրված ձեր առաջ.—«Փախչե՞լ կամ դատվե՞լ»:

Գիտակից հասարակութիւնը, եթէ նրա մէջ չէ մեռել դեռ պատուի զգացումը, երևի մի օր իր արդար հատուցումը կը տայ ձեզ...

Իսկ առայժմ հանգիստ մնաք... երջանկաւէտ թռնալից կեանք մինչև ձեր մահվան վերջին րոպէները...

Բայց, երանի թէ՝ ձեր այս խայտառակ պարտութիւնը գոնէ մի փոքր չափով խրատական լինէր ձեզ համար:

Դէհ, գնա՛ք բարով...

Թեմականի բարձր դասարանների
բողոքող աշակերտներ՝

Սեդրակ Յովհաննիսեան, Յովհաննէս Սողոմոնեան, Միսակ Տէր-Ղազարեան, Մարտիրոս Արզումանեան, Իսրայէլ Տէր-Վարդանեանց, Սեդրակ Եղիեանց, Նիկողայոս Յարութիւնեան, Գէորգ Գրիգորեան, Գէորգ Տէր-Գրիգորեան, Զաւէն Խանդաեան, Աստուածատուր Ադամեան, Արտաշէս Տէր-Մինասեանց, Յովհաննէս Յովհաննիսեան, Արսէն Մուսայէլեան, Հայրապետ Ղազարեան, Աղաջան Ղալաբէգեան, Յարութիւն Կ. Յովհաննիսեան, Գրիգոր Լազարեան, Գարեգին Մելիք-Ղարագեօզեան, Թէոդորոս Տատուրեան, Բագրատ Յովհաննիսեան, Մանուչար Շաքարեան, Ալէքսանդր Բաղդասարեանց, Ռուբէն Ղուլճատեան, Ալէքսանդր Բաբայեան, Արտաշէս Տ. Գրիգորեան, Միքայէլ Բաղդասարեան, Վահան Դ. Շահումեանց, Սարգիս Տէրտէրեան, Յակոբ Նաւասարդեան, Խաչատուր Մ. Բարխուդարեան, Գրիգոր Իսրայէլեան, Յակոբ Յակոբեան, Եսայի Քամալեան, Միսակ Պետրոսեան, Արսէն Դաւթեան:

Յ. Գ.—Ցաւում ենք՝ որ մնացած բացակայ ընկերներն էլ իրանց հուժկու ձայները կը հնչեցնեն ու կը ձայնակցեն մեզ...

Նոյն

Շուշի, մայիսի 7-ին

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Մինիստրների խորհրդի նախագահի ճառի շարունակութիւնը):

Բայց դրա համար անհրաժեշտ է հնարաւորութիւն տալ ընդունակ և աշխատասէր գիւղացուն—ռուսաց հողի այդ աղին—ազատվել այն վերին աստիճանի ճնշիչ դրութիւնից, կեանքի այն այժմեան պայմաններից, որոնց մէջ նա գտնվում է ներկայումս. պէտք է նրան հնարաւորութիւն տալ ստանալ իր աշխատանքների պտուղները, նրանց իր անբաժանելի սեփականութիւնը դարձնելով: Թող այդ սեփականութիւնը ընդհանուր լինի այնտեղ, ուր համայնքը դեռ գոյութիւն ունի, թող նա ծխային լինի այնտեղ, ուր համայնքը իր կենսունակութիւնը արդէն սպառել է, բայց նա թող ամուր լինի, թող ժառանգական լինի: Այդպիսի սեփականատէր-տիրոջ կառավարութիւնը պարտաւոր է օգնել խորհուրդներով, օգնել փոխատուութիւններով, այսինքն փողերով: Այժմ արդէն հարկաւոր է անմիջապէս ձեռնարկել կոպիտ (черная) աշխատանքի, հնարաւորութիւն տալ բոլոր սակաւահող գիւղացիներին օգտվել գոյութիւն ունեցող հողային պահեստից հողի այն քանակութեամբ, որքանին նրանց անհրաժեշտ է, ձեռնտու պայմաններով: Մենք այստեղ լսեցինք, որ նրա համար, որպէսզի բաւականաչափ հող տրվի բոլոր գիւղացիներին, անհրաժեշտ է 57 միլիոն դեսեատին պահեստի հող ունենալ: Կրկին ասում եմ, որ թւանշաններ ես չեմ ժխտում, սակայն հէնց այստեղ մատնանշվեց, որ կառավարութեան տրամադրութեան տակ գտնվում է միայն 10 միլիոն դեսեատին:

Սակայն, պարոններ, չէ՞ որ կառավարութիւնը միայն վերջերս է սկսել հողային ֆոնդ կազմել, չէ՞ որ գիւղացիական բանկը ծանրաբեռնված է առաջարկութիւններով: Այստեղ յարձակվեցին գիւղացիական բանկի վրա և այդ յարձակումները բաւականաչափ ծանրակշիռ են, և նոյնիսկ գործածվեց «դա պէտք է դէն ձգել» ֆրազը: Կառավարութեան կարծիքով ոչինչ չը պէտք է դէն ձգել, իսկ սկսած գործը պէտք է բարելաւել. գուցէ դուք պէտք է դիմէք այն մտքին, որ ես ցոյց տուի սկզբում, այսինքն՝ պետական օգնութեան: Կանգ առէք, պարոններ, այն կարծիքի վրա, որ պետութիւնը մի ամբողջ օրգանիզմ է և եթէ օրգանիզմի մասերի—պետութեան մասերի միջև կռիւ սկսվի, այն ժամանակ կառավարութիւնը իրօք կը կորչէ և կը վերածվի մի բաժան - բաժան թագաւորութեան (?): Ներկայումս պետութիւնը մեզ մօտ հիւանդ է. և նրա ամենահիւանդոտ մասը, որը քայքայվում է, թառամում, հանգիստանում է գիւղացիութիւնը, և նրան հարկաւոր է օգնել:

Առաջարկվում է հասարակ, բոլորովին ինքնաշարժ, միանգամայն մեքենայական միջոց, վերցնել և բաժանել բոլոր՝ ներկայումս գոյութիւն ունեցող 130,000 կալուածքները: Պարոններ, չէ կարելի ամպացնել հիւանդ մարմինը, կերակրելով նրան նրանից կտրած մսի կտորներով: Պէտք է բուժել օրգանիզմը, անմնացորդ հիւթերը պէտք է հոսեցնել դէպի հիւանդ տեղը, պետութեան մասերը. պէտք է օգնութեան հասնել նրա այն մասին, որը ներկայումս հանդիսանում է ամենաթոյլը:

Այդ մտքով հասկացվում է պետականութիւնը, այդ — արդարացումն է պետութեան, ինչպէս մէկ սօցիալական ամբողջութեան:

Այն միտքը, որ պետութեան բոլոր ույժերը պէտք է օգնութեան գան նրա ամենաթոյլ մասին, կարող է յիշեցնել սօցիալիզմի սկզբունքը: Եւ եթէ այդ սկզբունքը սօցիալիզմի սկզբունք է, ուրեմն պետական սօցիալիզմի, որը յաճախ գործադրվել է արևմտեան Եւրոպայում մի քէալ, էական հետևանքներ է ունեցել:

Կառավարութիւնը պակասեցրել է ժամանակաւորապէս օրէնքի 87-րդ յօդուածով մտցրած գիւղացիական բանկին վճարվելիք գումարի տոկոսները: Այս միջոցը աւելի աչքի ընկնող է և աւելի ունի պակաս ծաւալ, քան այն, որ կառավարութիւնը ամենուրեք իր վրա վերցնի հողի գնի կէսի վճարումը, ինչպէս առաջարկում է ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը: Եթէ միաժամանակ սահմանվի համայնքից ելնելու միջոց և այդպիսով ստեղծվի ամուր անհատական (индивидуальный) սեփականութիւն, կանոնաւորվի, ստեղծվի լայն, հողը բարելաւելու փոխատուութիւն, այն ժամանակ թէև կառավարութեան ուրուագծած հողային բարենորոգումների շրջանը լիովին կզգիացած չի լինի, սակայն հարցը կը լուսաբանվի:

Բայց և ժամանակ է առաջ մղել պարտադիր գրաւման հարցը, ժամանակ է, պարոններ, դրա մէջ չը տեսնել դիւթական միջոց, ինչ որ բուժիչ բան: Այդ միջոցը համարձակ է սոսկ այն պատճառով, որ քայքայված Ռուսաստանում նա կը ստեղծէ քայքայվածների մի դասակարգ: Պարտադիր գրաւումը, յիրաւի, կարող է անհրաժեշտ լինել, բայց, պարոններ, բացառիկ դէպքում, բայց ոչ իբրև ընդհանուր օրէնք. օրէնքի ճշգրիտ շրջանակներում պարտադիր գրաւումը ոչ թէ քանակի, այլ որակի բնաւորութիւն կը կրէ: Նա պէտք է գործադրվի գլխաւորապէս այն ժամանակ, երբ գիւղացիներին կարելի է կարգաւորել տեղերում՝ հողից օգտվելու եղանակը բարելաւելու համար, նա կը գործադրվի նոյն ժամանակ, երբ գիւղացին կազատվի միասակար հողերի մէջ առ մէջ ընկած դրութիւնից (чересполосица):

Բայց ես, պարոններ, ձեզ չեմ առաջարկում լիակատար ագրարային նախագիծ, ինչպէս վերևում ասացի, ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում միայն այն նշանաձողերի վրա, որոնց առաջադրել է կառավարութիւնը: Տաս տարու չափ պարապելով հողային խնդրով, ես եկել եմ այն խորին համոզման, որ այդ գործում հարկաւոր է յամառ և տոկուն աշխատանք, հարկաւոր է երկարատև կոպիտ աշխատանք: Այդ հարցը լուծել միանգամից անկարելի է, նրան պէտք է լուծել աստիճանաբար, ժամանակի ընթացքում. արևմտեան պետութիւնների մէջ դրա համար պահանջվում էր տասնեակ տարիներ: Մենք ձեզ առաջարկում ենք համեստ, բայց հաւատարիմ միջոց: Պետականութեան հակառակորդները կամենում են ընտրել արմատական միջոց, կամենում են ազատվել Ռուսաստանի պատմական անցեալից, նրա կուլտուրական աւանդութիւններից: Նրանց հարկաւոր է մեծամեծ ցնցումներ, դղրդումներ, մեզ հարկաւոր է մեծ Ռուսաստան»: (Աջակողմը ծափահարում է):

Մինիստրների խորհրդի նախագահի ճառից յետոյ, Դուման միաձայն որոշում է չը շարունակել վիճաբանութիւնները:

Նիստը փակվում է 6 ժամ 40 րոպէին:

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Րիգա, ապրիլի 27-ին

Րիգայի պօլիտեխնիկական ինստիտուտի հայ ուսանողների սոյն թուի մարտի 13-ին կայացած ընդհանուր ժողովը, համաձայն իր որոշման պօլիտեխնիկումի այն նախկին ուսանողների վերաբերմամբ, որոնք փոխարինաբար նպաստ են ստացել «Սևան» ուսանողական ընկերութեան գանձարանից, դիմում է վերջիններիս՝ յիշեցնելով շտապել կատարել իրանց դէպի գանձարանը ունեցած պարտականութիւնները վերցրած նպաստների վերաբերմամբ, որոնք վաղուց պէտք է վերադարձված լինէին:

Ժողովը հրաւիրում է յիշեալ անձանց ուշադրութիւնը, որ ներկայումս օժանդակութեան կարիք ունեցող ուսանողների թիւը շատ է և յուսով է, որ նրանք, որոնք իր ժամանակին օգտվել են գանձարանի նիւթական աջակցութիւնից, չեն յապաղի հասնել նրան օգնութեան ներկայ հարկաւոր րոպէում, որով միևնոյն ժամանակ և ազատած կը լինեն ուսանողութեան դիմելու ոչ-ցանկալի միջոցների, հակառակ վերջիններս ցանկութեան:

Սոյն ժողովը անհրաժեշտ համարեց յայտնել ի գիտութիւն շահագրգռված անձանց, որ ուշադրութեան առնելով նախկին իր մի քանի դիմումները, որոնք դժբաղդաբար ոչ մի դրական հետևանք չեն ունեցել գանձարանի համար, չը նայելով ուսանողութեան ունեցած տեղեկութիւններին, որ բոլոր այդ կարգի՝ աւարտած նախկին ուսանողները արդէն պաշտօններ և հնարաւորութիւն ունին՝ վերադարձնելու իրանց պարտքերը—համարում է ներկայ դիմումը վերջինը նրանց և այդ պատճառով պարտաւորեցրել է ժողովի պրեզիդիումին հրատարակել այն բոլոր անձանց ազգանունները, որոնք մինչև որոշված ժամանակը չեն ուղարկի իրանց պարտքերը կամ լռութեամբ կանցնեն սոյն դիմումը:

Ազգանունները կը հրատարակվեն հայ և ռուս մամուլում մի ամսից յետոյ, հաշւելով ժամանակը նամակիս մամուլում դուրս գալու օրից:

Դիմել հետևեալ հասցէով
Рига, Политехническій Институтъ.—Студенту Оганесу Оганесіанцу.

Նախագահ ընդհանուր ժողովի՝
Յովհ. Յովհաննիսեան
Քարտուղար՝
Գ. Մարութեան
Գանձապահ՝
З. Сапаровъ

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Դումայի շրջաններում լուր է պտտում, որ Գօլօվինը շուտով նոր ունկնդրութիւն է ունենալու Ցարսկոյէ Սելօյում: Միաժամանակ խօսում են, որ աջակողմեաններն էլ, նախատեսելով այդ ունկնդրութեան հնարաւորութիւնը, իրանց կողմից եռանդուն ջանքեր են գործ դնում ունկնդրութիւն ստանալու Ցարսկոյէ Սելօյում, բայց Ստոլիպինը դէմ է աջակողմեանների ընդունելութեան, որոնց չափից դուրս վարկաբեկեցին իրանց:

(«Бирж. Вѣд.»)

—Դումայի մահմեդականների ֆրակցիան իր վերջին խորհրդակցութեան մէջ քննութեան է ենթարկել Մեքքա գնացող մահմեդական ուխտաւորների ծանր դրութեան հարցը: Ֆրակցիան ի միջի այլոց որոշել է հարցապնդում անել Դումային գեն. Դումբաձէի Եալտայում ունեցած գործունէութեան առիթով:

(«Р. С.»)

—«Б. В.» լրագիրը հետևեալ հարցն է տալիս: Կարծում են, արդեօք, պարլամենտի շէնութեան մէջ մանել արտաքսված պատգամաւորները: Պալատի պահպանութեան մասին հոգացողները այդ առիթով որոշ կարծիք ունին: Տաւրիկեան պալատի պահակները ենթարկվում են միայն մինիստրների խորհրդի նախագահի կարգադրութեանը: Ինչ վերաբերվում է պահակախմբի հրամանատարի և Դումայի նախագահի փոխադարձ յարաբերութիւններին, առաջինի համար պարտաւորեցուցիչ է միայն նիստերի դահլիճի մէջ զինուորական պահակախումբ մտցնել, որը լիազօրութիւն չունի իրագործել Պետական Դումայի պրիստաւը: Եթէ պահակախմբի հրամանատարը ինքը ներկայ լինէր նիստերի դահլիճում, նախագահի հրամանը ստանալուն պէս պարլամենտի շէնութեան մէջ եղած 58 պահակների օգնութեամբ յանցաւորներին դուրս կը տանէր: Ներկայումս Պուրիշկևիչը, Սազօնովիչը և Կելեպօվսկին իրաւունք ունեն մանելու Տաւրիկեան պալատի շէնութեան մէջ, իսկ մնացեալը կախված է արդէն պրիստաւից:

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՊԱՏԱՍԽԱՆ

Ամեն անգամ երբ «Մշակի» մէջ տպվում է մի մերկացումն որևէ մի հասարակական ցեցի, վաշխառուի կամ մի այլ անձի մասին, որ այս կամ այն կերպ առնչութիւն ունի «Դաշնակցութիւն» կոչված կազմակերպութեան հետ, իսկոյն «հայ պատրիոտների» օրգան համարվող թերթերում բարձրանում է մի սոսկալի վայնասուն, ճահճային գորտերի մի այլանդակ կռնչոց: Այդ գորտերը արձակում են իրանց սովորական կռնչոցը—«գլուանք Քալանթար—Առաքելեանին, «Մշակին»—ստորագրելով արդէն վաղուց պատրաստ նամակների տակ: Եւ խուլիգանական այդ վարմունքը շարունակվում է անընդհատ, առանց ամաչելու, առանց մի րոպէ յիշելու, թէ մամուլը ճահճային գորտերի կռնչոցի տեղ չէ:

«Մշակի» № 79-ի մէջ տպված է մի նամակ, որ խմբագրութիւնը ստացել է 25 անձերից, որոնք բողոքում են թէ «Ժամանակ» թերթը, արհամարհելով բանուորների ստորագրութիւններով վաւերացրած յօդուածը, սխալը ընդունելութիւն է ցոյց տալիս վաճառական Կարապետ Գալստեանի (Հրայր) պէս մի հասարակական ցեցի յօդուածներին: Կարող էր «Մշակը» չը տպել այդպիսի մի բողոք: Բայց բանից դուրս է գալիս, որ Հրայր կոչվածը դաշնակցական գործիչներիցն է և ահա «Փայլակ» թերթը, «հայ պատրիօտների» օրգանի շարունակութիւնը, իր № 23-ի մէջ շարում է դաշնակցական նեխած ճահճից դուրս եկած գորտերի բարձրացրած վայնասունը: Եւ 7 հատ իրար, ետևից շարված մարգարտանման հայհոյական նամակները Քալանթար-Առաքելեանի հասցէին, որոնց միատեսակ խմբագրութիւնը (թէև գրված իբր թէ զանազան տեղերից) ոչ մի կասկած չեն թողնում, որ թելադրված են ստորագրել տուած յայտնի «դաշնակցական» եղանակով: Միայն մի բան են ապացուցանում, որ հայութիւնը ունեցել է Հրայրի պէս մի նշանաւոր գործիչ, բայց, աւաղ, մինչև այսօր չէ իմացել և չէ գուշակել:

Թողէք, պարոններ, խուլիգանական այդ ձևերը. ոչ ոքի խաբել չէք կարող. եթէ, յիրաւի, Հրայր կոչված ձեր երևելի գործիչը ոչ հասարակական ցեց է և ոչ վաշխառու, բաւական էր փաստերով հերքելու այդ և ոչ գորտային կռնչոց բարձրացնելու: Հօ, փառք Աստուծոյ, նորութիւն չէ, որ մեր խուլ գաւառական անկիւններում վաշխառուները, ցեցերը, տղրուկները, ժողովրդի արիւն ծծողները, սիմօնական հոգևորականները կարողանում են աճել, զարգանալ և իրանց ցանցերը, թակարդները լարել միայն դաշնակցական հովանու և ճաւլիկի տակ:

Դուք արժանի էք՝ միայն մեր կատարեալ արհամարհանքին և ձեր հայհոյանքները զուր են՝ սարսելու մեզ չը հարուածել տղրուկներին և ցեցերին:

Հ. Ա.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մայիսի 8-ին

Զիգրաշէնի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը խնդրում է ձեզ տպել այս հաշիւը այն ներկայացման, որը կայացաւ մարտի 18-ին Թիֆլիսի ժողովարանում, յօգուտ դպրոցի:

Մուտք՝ տոմսակներից	646 ր.	10 կ.	
Մրգավաճառներից	5 »	52 »	
Նուէրներ	68 »	20 »	
			Ընդամենը 719—82
Ելք՝ ժողովարանի վարձ	100 »	»	
Թատերասէրների խմբի հաշւով	114 »	50 »	
Զանազան ծախքեր	20 »	»	
Մարկաների	29 »	60 »	
			Ընդամենը 264—10

Մնում է զուտ արդիւնք 455 ր. 72 կ.: Վերոյիշեալ 68 ր. 20 նուէրը ստացված է հետևեալ անձնաւորութիւններից. «Սապունչի» 25 ր., պ. Ա. Սառաջեանից 10 ր., պ. Յ. Պապայեանից 5 ր., պ. Խ. Տարասեանից 3 ր., պ. Ա. Օրբէլեանից 3 ր. 20 կ., պ. Կ. Քամալեանից 2 ր., պ. բժ. Աֆթանդիլեանից 3 ր., պ. Ս. Միրիմանեանից 1 ր., պ. Դ. Ակպուլեանից 3 ր., պ. Ա. Շաղինեանից 2 ր., պ. բժ. Աթաբէգեանից 2 ր. 60 կ., պ. Խ. Առաքելեանից 2 ր. 60 կ., պ. Մալյասեանից 1 ր., պ. Սուլխանեանից 2 ր. և պ. Քալանթարեանից 1 ր. 80 կ.:

Սրանց բոլորին և Թատերասէրների խմբին հոգաբարձութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը:

Ապառիկ մնացել է 161 ր. 50 կ.: Հոգաբարձութիւնը խնդրում է տոմսակ ընդունողներին շտապել փողը տալ պ. Քալանթարեանին:

Նախագահ՝ Մ. Մովսիսեան
Քարտուղար՝ Յ. Տէր-Միքայէլեան

Թիֆլիս, մայիսի 6-ին

«Փայլակի» № 18-ում տպված Մ. Տէր-Մարտիրոսեանի 9 դասընկերների նամակին ի պատասխան խնդրեմ զետեղէք հետևեալը ձեր լրագրի առաջիկայ համարներից մէկում:

Նախ որ այդ ստորագրութիւնների մի մասը կեղծ են և ահա թէ ինչպէս: Իմ կուրսերում երբեւիցէ չեն սովորել Բուղդան Պետրոսեան, Գրիգոր Հէմփեան, Ամատունի Աւետիսեան և Արամ Տէր-Մելքիսեդեկեան: Арчилъ Мчедловъ թէև սովորել է ինձ մօտ, բայց թոյլ լինելու պատճառով վկայական չէ ստացել, ուստի և «դաղած սիրտը» հովացնելու պարագան է նրա յանկէտը:

Արտաշէս Շահինեան ընդամենը 21 օր է եղել իմ կուրսերում և ինչ գաղափար կարող էր կազմած լինել 21 օրում կուրսերի մասին: Մնացեալ երեքը եղել են, այո, իմ կուրսերում և փոքր ի շատէ աջողութեամբ աւարտել են:

Հայ-Թուրքական աղէտների ժամանակ, երբ գաւառացի աշակերտներս սաստիկ վրդովված էին և, աւելացնենք դրան, երբ ուսուցիչ Զոհրաբեանը հեռացաւ կուրսերից, ամբողջ դասարանից ուղարկված խնդրագրի մէջ միևնոյն այդ երեք աշակերտներն էլ ստորագրել են, թէ «դասընթացից լինելով և բաւական իւրացրած լինելով բոլոր առարկաները, բացի պ. Զոհրաբեանի առարկայից» (որ հեռանալու շնորհիւ թերի էր մնացել) խնդրում էին արձակուրդ տալ քննութիւնների համար պատրաստվելու:

Այդ երիտասարդներն ինչի են այդքան շուտ մոռանում իրանց ստորագրութիւնները և ընկնում ողորմելի հակասութիւնների մէջ:

Ինչ վերաբերում է Մ. Տէր-Մարտիրոսեանին, իբրև կուրսերից հեռացրած նախկին աշակերտի, միշտ վրդովված է և այդպէս էլ կը շարունակվի երևի, մի բան, որին ես մազաչափ անգամ նշանակութիւն տալ չեմ կարող:

Այդքանը, կարծում եմ, բաւական կը լինի:

Նիկ. Աբրահամեան

Յ. Գ.—Ներկայ նամակը ուղղել էի «Փայլակի» խմբագրութեան, բայց չը տպեցին:

Նոյն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային տան դահլիճում նշանակված է Հայոց Բարեգործական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: Այս ժողովում քննվելու են մի քանի կարևոր հարցեր: Ցանկալի է, որ անդամների գոնէ մեծամասնութիւնը ներկայ լինի: Նոր անդամներ կարող են գրվել ժողովից առաջ նոյն տեղում:

Երևանից ստացված՝ «Մշակի» 91 համարում յիշված 583 ր. 66 կ. և 97 համարում յիշված 150 ր., կէսը—366 ր. 83 կ. փոխադրեցինք Բագու «Каспій» լրագրի խմբագրութեան անունով, Զանգեզուրի գաւառի սովեալ մահմեդականներին բաժանելու, տեղական կօմիտետների միջոցով:

Քութայիսի նահանգի Սենակի գաւառապետ Պանաֆիդին և Գանձակի նահանգի Զանգեզուրի գաւառապետ Միտկէվիչը տեղափոխվում են մէկը միւսի տեղը:

Թիֆլիսի երեք քաղաքամասերի ընտրողների ցուցակները արդէն պատրաստ են և տրվում է քաղաքային վարչութեան մէջ, առաւօտվայ ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 3-ը: Առաջին քաղաքամասի ընտրողների թիւը 920 է, որոնցից առևտրա-արդիւնաբերական ցենզով—788 հոգի են, ստացուածքային ցենզով՝ 755: Երկրորդ քաղաքամասինը—առևտրա-արդիւնաբերական ցենզով՝ 126 հոգի, ստացուածք. 570: Երրորդինը՝ առևտ.-արդ. 102 հոգի, ստացուածք. 760: Ընտրողական ժողովի տոմսակների տալը շատ դանդաղ է ընթանում, շնորհիւ ընտրողների անտարբերութեան:

Մայիսի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին, քաղաքային դումայի դահլիճում կը կայանայ 3-րդ քաղաքամասի ընտրողների ժողովը՝ ապագայ քառամեակի ձայնաւորների թեկնածուներին մատնանշելու համար: Ժողովին կը նախագահէ Ա. Ս. Բաբեանը:

Նիկօլայ Իվանօվիչ Թամամշէվին թոյլատրըված է հրատարակել Թիֆլիսում ամենօրեայ ռուսերէն լրագիր «Кавказск Рабочій» անունով, «Профессіональный Вѣстникъ» յաւելուածով:

3-րդ արական գիմնազիայի 5 և 6-րդ դասարանների աշակերտները հրաժարվել են քննութիւն տալուց:

Թիֆլիսի էլէքտրաքարշի դիրեկտորի նոր կարգադրութիւնը, որով փոխվել է վագոնների երթևեկութիւնը Վերայի կամուրջով, շատ անյարմարութիւններ է ստեղծել Վերայի բնակիչների համար: Այժմ վագոնները Երևանեան հրապարակից ուղղակի գնում են Վերայի կամուրջով փօկզալ: Դա ի հարկէ շատ յարմար է նրանց համար, որոնք նստում են Երևանեան հրապարակում, բայց Վերայում բնակվողները զրկված են Վերեյսկի գծով օգտվելու հնարաւորութիւնից, որովհետև Երևանեան հրապարակից Գօլօվինսկի պրօսպեկտով եկող լիքը վագոնները նոյնպէս լիքը շարունակում են ճանապարհը. բացի դրանից Օլգինսկի փողոցով երթևեկում է միայն 1 վագօն, իսկ Ցինձաձեի փողոցով—2 վագօնը, չափազանց քիչ է Վերայի րայօնի բազմաթիւ բնակիչների համար: Դրա վրա դարձնում է էլէքտրաքարշի վարչութեան ուշադրութիւնը:

Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Հայոց Ազգագրական ընկերութեան խորհուրդը յայտնում է, որ ինքը կազմակերպում է մի էքսկուրսիա դէպի Անի: Արշաւախումբը Թիֆլիսից երկաթուղով մեկնելու է Ալէքսանդրապօլ, այնտեղից նոյն ընկերութեան ճիւղի աջակցութեամբ և ուղեկցութեամբ կառքերով գնալու է Արգինա, Տիկոր, Երադգաւոր, Ղօշավանք և Անի: Էքսկուրսիան տեղի է ունենալու յունիսի սկզբին, երբ պրոֆ. Մառը կը լինի Անիում, և տևելու է չորս օր: Մասնակցել ցանկացողները պէտք է ստորագրվեն մինչև ամսիս 25-ը խորհրդի փոխ-նախագահ տ. Հ. Մարտիրոսեանի (Մադաթեան փ. № 5), գանձապահ Ա. Սարուխանեանի (Մանթաշեանի գրասենեակ) և անդամներ Ե. Շատուրեանի (Դվորցովայա, լամպային պահեստ) և Ե. Լալայեանի (Սալէքօրնայա № 5) մօտ, որոնցից և կարող են տեղեկանալ պայմանների մասին: Էքսկուրսիայի օրը կը յայտարարվի առանձնապէս»:

Թիֆլիսի նահանգապետի պաշտօնակատարը տեղեկացրել է Թիֆլիսի քաղաքագլխին, որ նա Թոյլատրել է ձայնաւոր Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին վարել Պուշկինեան գրադարանի գործադիր մասնաժողովի անդամի պաշտօնը, իսկ ձայնաւորներ՝ Ա. Բէհբուդեանին, Կ. Ղօնեանին, Մ. Լոլոկէվիչին, Գ. Մելիք-Ղարագեօզեանին, Ն. Օստրօգօրսկուն և Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկին լինել Զուբալովի անունով հիմնված աղքատանոցի մասնաժողովի անդամներ։

—

Ինչպէս հաղորդում է «Голосъ Кавказа» լրագիրը, մայիսի 9-ին մեծ հանդիսաւորութեամբ տօնվել է Թիֆլիսի «հայրենասէրների ընկերութեան» երկրորդ տարին։ «Ռուս ժողովրդի դաշնակցութեան» պատգամաւորները ընկերութեանը մատուցել են ս. Նիկոլայ հրաշագործի պատկերը։ Մաղթանք է կատարվել եկեղեցական Թափօրով։ Ներկայ են եղել մօտ 10,000 մարդ։ Թիֆլիսի գեներալ-նահանգապետը և այլ բարձրաստիճան անձինք յայտնել են իրանց շնորհաւորանքը տօնի առիթով։

—

Ինչպէս հաղորդում են Բագուի լրագիրները, նաւթարդիւնաբերողների համագումարը մայիսին չի կայանայ, նաւթարդիւնաբերողները կը բաւականան մասնաւոր խորհրդակցութիւններ կազմելով։

—

«Закавказье» լրագրին գրում են Բագուից, որ մեծ հետաքրքրութիւն է առաջ բերել նաւթարդիւնաբերողների յարուցած այն հարցը, որ վերաբերում է Մօսկով-Կովկասեան ընկերութեան գործողութիւններին։ Այս ընկերութիւնը կապալով վերցրել է Ռօմանիից դէպի ծովը տանող ջրանցքը, որի կողքերից խողովակներ շինելով, շարունակ նաւթ է գողացել, որով ընկերութիւնը անգին հարստութիւն է դիզել։ Համագումարը միջնորդել է Փոխարքային, որ առաջիկայ աճուրդի ժամանակ այդ ջրանցքը յանձնվի նաւթարդիւնաբերողների համագումարին առանց կապալի։

—

Մայիսի 10-ին, լուսաբացին, Ջեմօ-Նիկօյի գիւղում (Գօրու գաւ.) սպանել են յայտնի աւազակ Գօգիաշվիլիին։

—

Թիֆլիսի գաւառից հաղորդում են, որ մօտ օրերս 4 զինված չարագործներ, Օրխևի կայարանից 4 վերստ հեռաւորութեան վրա, յարձակում են գործում Սղնախի գաւառի բնակիչներ Իլիկօ Մալոմաձէի, Եգոր Բէտիաշվիլու և Գիգօ Ջափարաշվիլու վրա, և խլում են առաջինից 100 ր. փող և արծաթէ գօտին ու ձին, երկրորդից 8 ր. փող և երրորդից 63 ր. ու խուրջինը։ Ոստիկանութեանը աջողվում է ձերբակալել երկուսին։

—

Գոմձակ կայարանից հաղորդում են, որ մայիսի 7-ին, երեկոյեան ժամը 9-ին, մեքենավար Վասիլիյ Մերկուլօվը, դէպօյի մօտ վարժութիւններ կատարելուց յետոյ, գալիս է եղել դէպօյի ճանապարհով դէպի տուն։ Շոգեմեքենաների և վագոնների մէջտեղից նրա վրա ինչ որ չարագործ կրակում է և վիրաւորում է նրան երեք տեղից։ Վիրաւորվածին առաջին օգնութիւնը հասցնելուց յետոյ տանում են Թիֆլիսի երկաթուղային հիւանդանոցը № 3 գնացքով։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Անցեալ երկու տարվայ արհաւիրքներից յետոյ, Դիլիջանը այժմ պատրաստվում է ամարանոցաւորներին ընդունելու, որով և գէթ մասամբ լրացնելու իր բացերի մի մասը։ Անցեալ երկու ամառները զրկվեցինք մենք ամարանոց եկողներից, շնորհիւ սուտ ու շահախնդիր մարդկանց պրօվօկացիայի, որով սարսափելի գոյներով նկարագրելով Դիլիջանը և նրա ճանապարհը Ղարաքլիսից Դիլիջան—սարսափ էին ներշնչում քաղաքներից եկող երկչոտ ժողովրդին, որոնք, իրանց կեանքերը երևակայական րիսկի չը դնելով, հրաժարվում էին Դիլիջան գալու մտքից, մինչդեռ ամենքին յայտնի է, որ Թուրք-հայկական ընդհարումների ամենասարսափելի ժամանակն անգամ Դիլիջանը եղել է ամենաանվտանգ և ապահով վայրը։ Ինչևիցէ, այժմ երևում է, որ այլևս հող չեն գտնելու այս ամառ նոյնանման ստայօդ լուրերը, որովհետև հէնց այժմեանից սկսել են ամարանոցներ վարձել, և Դիլիջան-Ղարաքլիսայի տրակտի կապալառու պ. Աբովեան, ինչպէս լսեցինք, ամսիս 15-ից սկսած մինչև 4 ամսիս ժամանակի, իւրաքանչիւր օր «սրօչնի» օմնիբուս է բաց Թողնելու Ղարաքլիսայից Դիլիջան և ընդհակառակը, էժանացրած գներով, այն է իւրաքանչիւր մարդուց մէկ րուբլի։ Կարելոյն չափ նոյնպիսի յարմարութիւններ ցանկանում են տալ և Աղստաֆա-Դիլիջանեան տրակտում, ուր կարելի է նախօրօք հեռագրով կամ նամակով կառքեր պատուիրել»։

—

Ներքին գործերի մինիստրութեանը արդէն յայտնված է, որ հօֆմէյստէր Գուրկօն հեռացրված է պաշտօնից։ («П. Г.»)

—

«Сегодня» լրագրի ստացած տեղեկութիւնների համաձայն, պրեմիէր Ստօլիպինը պատրաստել էր մասնակի ամնիստիա շնորհելու մի նախագիծ, որը մտադրութիւն կար յայտարարել մայիսի 14-ին, այսինքն՝ Թագադրութեան օրը։ Բայց ներկայումս, չափազանց կարևոր նկատումներով, որոնք մանրամասն կերպով յայտարարվելու են վաղը, ամնիստիայի հարցը նորից յետաձգված է անորոշ ժամանակով։

—

Պետական Խորհրդի անդամ Պիխնօի բնակարանում կայացել է խորհրդի աջակողմեան անդամների խմբակի խորհրդակցութիւնը, պատգամաւորներ Կրուպենսկու, Շուլգինի, Պուրիշկեվիչի և կոմս Բոբրինսկու մասնակցութեամբ։ Ժողովը միաձայն անհրաժեշտ համարեց խնդրամատոյց լինել Թագաւորին իրանց ունկնդրութիւն շնորհելու համար, որպէսզի մատնանշեն վերակվող ագրարական նոր յուզմունքների նշանների վրա, որոնք ժողովականների կարծիքով ձախակողմեան պատգամաւորների ագրարական ճառերի հետևանք են։ Ունկնդրութիւն խնդրելու գործը յանձնարարված է Պիխնօին և կոմս Բոբրինսկուն, որոնք արդէն այդ մասին յայտնել են պալատական մինիստր բարոն Ֆրեդերիկսին, բացատրելով բանի էութիւնը։ («П.»)

Բանտային գլխաւոր վարչութեան մէջ լուրեր են պտտում, որ քաղաքական տաժանակիր, յայտնի յանցաւորներից մէկին աջողվել է փախչել տաժանակիր բանտից։ Մինչև հաստատ տեղեկութիւններ ստանալը, վճռված է փախչողի անունը ծածկել և փախուստի փաստը ժխտել։ («Парусъ»)

—

Պետական ատեանը վերջացրել է արդէն Գուրկօյի գործի մանրամասնութիւնը, սկսած Գօլուբևի մասնաժողովի աշխատանքներից մինչև Պետական Խորհրդի առաջին դեպարտամենտի որոշումը Գուրկօին դատի ենթարկելու համար։ Գործի արձանագրութիւնը ուղարկված է Ցարսկօյէ Սելօ Բարձրագոյն բարեհայեցողութեան։ («Р. Сл.»)

—

Մայիսի 15-ից սկսած «Русск. Знамя» լրագիրը ուղարկվելու է կենտրոնական նահանգների բոլոր շինական վարչութիւններին ձրի, ինչպէս որ ուղարկվում է «Сельск. Вѣстникъ»-ը։ («Тов.»)

—

Երդուեալ-հաւատարմատար Բուլացելը վճռաբեկ գանգատ է ներկայացրել Պետերբուրգի դատաստանական պալատին Պետերբուրգի նահանգական դատարանի դէմ այն բանի համար, որ վերջինս անհետևանք է Թողել Գուրկօին զրպարտելու համար «Страна» լրագրի խմբագիր պրօֆ. Գուսակօվի և Կովալեվսկու դէմ յարուցված մեղադրական գործը։ Այդ գանգատում Բուլացելը Թոյլ է տուել իրան դատարանի արժանապատւութեան համար վիրաւորական խօսքեր գործ ածել։ Այդ պատճառով պալատը որոշել է Բուլացելի վարմունքի մասին տեղեկացնել երդուեալ-հաւատարմատարների Պետերբուրգի խորհրդին։ («Р.Сл.»)

—

Այն լուրերը՝ Թէ առաջիկայ ուսումնական տարվանից բէալիստներին, կոմերսանտներին և այլն համալսարան չեն ընդունելու, պարզվում է, որ բոլորովին անհիմն են։ Լատիներէն լեզուի լրացուցիչ քննութեամբ ընդունվելու են. բէալիստները (7-րդ դասարանից), Պետերբուրգի վաճառականների ընկերութեան և Տենիշևեան առևտրական դպրոցները, Մոսկվայի գործնական գիտութիւնների ճեմարանը, Խարկօվի, Ալէքսանդրեան և Մոսկվայի կայսերական առևտրական դպրոցաւարտները։ Պատմական լեզուաբանական ֆակուլտետը մտնելիս պահանջվում է իմանալ յունարէն լեզուն։ Յիշեալ լրացուցիչ քննութիւնները կարելի է տալ արական գիմնազիաներում գարնանը՝ հասունութեան վկայական ստանալու քննութիւնների ժամանակ, վճարելով 16 րուբլի։ Մնացեալ առևտրական դպրոցաւարտ երիտասարդներին համալսարան ընդունելու հարցի առիթով դեռ ևս ընդհանուր որոշում չէ կայացել։ Պէտք է յուսալ, սակայն, որ առևտրական միւս դպրոցներում աւարտողներին էլ հնարաւորութիւն կը տրվի համալսարան մտնելու։ («П. Кр.»)

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մայիսի 11-ին, երեկոյեան ժամը 10-ի մօտերը, Վանքի մէյդանում, Դաւիթխանեանի տանը ապրող Սարգիս Յովհաննիսեանը յայտնել է, որ նրա բնակարանից, իր բացակայութեան ժամանակ, անյայտ չարագործների ձեռքով գողացված են 230 րուբլու զանազան իրեր։

—

Մայիսի 11-ին, գիշերվայ ժամը 11 և կէսին, Թիֆլիսեցի Աբրամ Սահակեանը յայտնել է 1-ին Թաղամասի ոստիկանական պրիստաւին, որ երբ նա գտնվելիս է եղել Օլգինսկի փողոցում, Նիկոլայ Ցօբաձէի կրպակում, նրա վրա են խուժել 6—7 անյայտ չարագործներ, զրկել են իրան և խլել են երեք պարտամուրհակներ 1000 ր. իւրաքանչիւրը, 300 ր. փող, 10 րուբլիանոց ժամացոյցը և հինգ տարվայ ժամանակով ստացած անցաթուղթը, որից յետոյ անյայտացել են։

—

Մայիսի 11-ին, գիշերվայ ժամը 11-ին, Նինա Մաչաբէլու բնակարանում, որ գտնվում է Ցինոնտալի փողոցում, Մայսուրաձէի տանը, խուզարկութիւն են կատարում, որի ժամանակ սենեակում գտնվող Նինայի տատ 66 ամեայ Մարիամ Զեբեզօվը վախից հոգին աւանդում է։ Դիակը ուղարկված է Միքայէլեան հիւանդանոցը, իսկ Նինա Մաչաբէլուն ձերբակալում են։ Նոյն օրը Ցինոնտալի փողոցում ձերբակալում են իր բնակարանում, խուզարկութիւնից յետոյ, օրիորդ Բագրաձէին։

—

Մայիսի 11-ին, ցերեկվայ ժամը 4-ին, Վերայի զառիվայրում ապրող այրի Կատարինէ Վինօգրադսկու բնակարանից անյայտ անձինք գողացել են 51 րուբլու զանազան իրեղէններ։

—

Լոյս 11-ի գիշերը, Մինգրէլեան գիւղի զօրանոցի մօտ, անյայտ չարագործները փորից վիրաւորում են Թիֆլիսեցի Յակօբ Մեսրոբեանին։

—

Մայիսի 11-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակի պաշտօնեայ Իվան Ջինօվսկին Լօրիս-Մելիքեան և Մուղնեցու փողոցների անկիւնում անզգուշութեամբ վայր է ընկնում, որի ժամանակ բացվում է նրա մօտ գտնված ատրճանակը, որը սակայն ոչ ոքի վնաս չէ հասցնում։

—

Մայիսի 11-ին, առաւօտեան ժամը 8 և կէսին, Միքայէլեան և Կօչուբէյսկի փողոցների անկիւնում անյայտ չարագործները դաշոյնով վիրաւորում են Գօրու գաւառի գիւղացի Լէվան Դիդէբուլիձէին փորից։ Վիրաւորվածին տանում են Միքայէլեան հիւանդանոցը։

—

Մայիսի լոյս 11-ի գիշերը, Նիկօլաէվսկի փողոցում, Յօսէֆ Տէլէլաձէի տանը անյայտ պատճառից հրդեհ ծագեց, որը իսկոյն և եթ հանգցրին տնային միջոցներով։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

11 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 մայիսի։ Հոկտեմբերականների համագումարի 6-րդ նիստում վճռվեց տեղական ինքնավարութեան բարենորոգման Վարոն Սեկրետի զեկուցումը ուղարկել բաժիններին քննելու համար, յետաձգել մահվան պատիժը վերացնելու հարցը՝ ի նկատի առնելով անդամների քչութիւնը, կանանց իրաւահաւասարութեան հարցը յանձնել բաժիններին։ Համագումարը յայտարարվեց փակված։

ԲԻՑՍԿ, 11 մայիսի։ Երէկ երեկոյեան զգացվեց Թեթև երկրաշարժ։

ՓԱՐԻԶ, 11 մայիսի։ Սօցիալիստ Բլան և քաղաքային ինքնավարութեան նոր անդամ Ժանի միջև մրցասրահում վէճ ծագեց։ Ժանը ապտակեց Բլանին, իսկ սա պատասխանեց ձեռնափայտի հարուածով։

ԼՈՆԴՈՆ, 11 մայիսի։ Համայնքի պալատի նիստերը վերսկսվեցին։ Պատասխանելով այն հարցապնդման, Թէ արդեօք բաւարարութիւն տրված է բրիտանական նաւերի այն տէրերին, որոնց նաւերը բռնվել էին ռուս-ճապօնական պատերազմի ժամանակ, ստատս-սեկրէտար Գրէյը ասաց, որ կառավարութիւնը առաջարկել է այդ գործը վճռել միջնորդ դատարանով։

12 մայիսի

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ, 11 մայիսի։ Զէմստվային պաշտօնեաների երէկվայ ժողովում, պլէբիցիտումի անդամների ստորագրութիւնից յետոյ, որ հանդիսաւորութեամբ խոստանում են պահել Թագաւոր կայսրի, ֆինլանդական Մեծ Իշխանի և ֆին ժողովրդի իրաւունքները, Տալմանը կարդաց Պետական Դումայի նախագահի շնորհաւորական հեռագիրը։ Սէյմը յանձնարարեց պլէբիցիտումին պատասխանել։

ՔԻՇՆԵՎ, 11 մայիսի։ Կալարաշում սպանել են ռուս մարդկանց դաշնակցութեան անդամներից մէկին, իսկ միւսին վիրաւորել են,

ՏՕՄՍԿ, 11 մայիսի։ Տեխնօլօգիական ինստիտուտից աւարտեցին 25 ինժեներ, մեքենագէտներ և 3 ինժեներ-քիմիկօսներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ Ցարսկոյէ-Սէլօում Թագաւոր կայսրին ներկայացան Հաագայի կօնֆէրէնցիա մեկնող ճապօնական պատգամաւորներ Զուզուկին, Օկիտման, Շիմամուրան, Կուրեսաշին, Ամակվան և Իօշիմուրան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 մայիսի։ Շարունակ հեռագիրներ են ստացվում զանազան քաղաքներից, հաստատութիւններից և մասնաւոր անձերից Թագաւոր կայսրի վտանգից ազատվելու առիթով։

ՀԱԱԳԱ, 11 մայիսի։ Ստորին պալատը յատկացրեց 100,000 գուլդէն՝ կօնֆէրէնցիայի պատգամաւորներին ընդունելու ծախքերը կատարելու համար։

ԻՈՀԱՆՆԵՍԲՈՒՐԳ։ Գործաթողների և խուժանի սպառնալիքներից հարկադրված այն հանքերում, ուր մինչև օրս աշխատում են բանւորները, աշխատանքները կանգ առան։ Մի քանի տեղերում լուրջ անկարգութիւններ են ծագել. բանւորները ընդհարվում են ոստիկանների հետ։ Տեղս եկաւ անգլիական 700 հեծելազօր։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 Թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ՋԻԿՕՎԱՆԻ—$9\frac{1}{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒՍՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ. վիրաբուժութիւն։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Կ. Ի. ԳՋԵԼԻԵՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—$1\frac{1}{2}$ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—$1\frac{1}{2}$—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԻԷՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ց. ԳՆԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ. և մորթու հ.
Վճարը 50 կ.։ չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԱՒԱՐՏԱԾ
ՆԵՐՍԻՍԵԱՆ VII-ՐԴ
մասնագիտական դասարանը, պատրաստում է աշակերտներ սոյն դպրանոցի բոլոր դասարանների և վերաքննութիւնները բռնելու համար,
Ձեռնտու պայմաններով
Հասցէները Թողնել «Մշակ»-ի խմբագրատանը։
(Կ, Ե. Հ.) 1—3

ՄԵԿՆԵԼՈՒ պատճառով
ԾԱԽՎՈՒՄ Է
տնային նոր կահկարասիք նկարչի պատկանելիքներով։ Կարելի է տեսնել ամեն օր ցեր. 10—2 ժամը և երեկոյեան 4—6 ժամը, բացի կիրակի օրվանից։ Бебутовская ул. д Орбели № 56, բնակարան Նշանեանցի։
(Հ. Կ. Ե. Հ. Կ.) 2—5

ՀԱՅՐԵՆԻՔ՝
արտասահման մեկնելու
ՊԱՏՃԱՌՈՎ
ծախւում եմ շատ լաւ սկսած գալանտերէյնի և Թղթի մեծ մագազին, որը վաճառում է օրական 200 րուբլուց ոչ պակաս։ Պայմանների մասին կարելի է իմանալ «Версаль» հիւրանոցի գրասենեակում։
(6, 8, 10,12,13) 5—5

Զուտ արդիւնքը հայ սովեալների օգտին
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վ. ՆԵՄԻՐՈՎԻՉ-ԴԱՆՉԵՆԿՕՅԻ
„Հայուհի Գայիանէն“
Դիմել Թարգմանչին՝ Москва армянскому Архид. Арсену, կամ Թիֆլիս, «Գուտտենբերգ» գրավաճառանոցին։
Հաշիւ հրապարակով
4—4

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐ

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բագու			
Արագ	6 ժամ	58 ր.	առաւօտ.
Մարդատար	9 »	3 »	»
Պօստատար	8 »	34	երեկոյեան
Թիֆլիսից դէպի Բաթում			
Պօստատար	1 ժամ	21 ր.	ցերեկվայ
Արագ	11 »	58 »	գիշերվայ
Մարդատար	1 »	3 »	»
Թիֆլիսից դէպի Բօրժօմ			
Մարդատար	9 ժամ	48 ր.	առաւօտ.
»	3 »	8 »	ցերեկվայ
Թիֆլիսից դէպի Երևան			
Մարդ-ապրանք.	1 ժամ	43 ր.	ցերեկվայ
Պօստատար	1 »	8 »	գիշերվայ

ԲԺՇԿԱՊԵՏ
Վ. ԱՐԾՐՈՒՆԻ
Մայիսի 1-ից վերսկսում է հիւանդների ընդունելութիւնը Պեատիգօրսկում (հանքային ջրերը)։
Հասցէն՝ Д-ръ В. Арцруни Пеатигорскъ. Верхн. буль- варъ, д. кн. Гирей.
(Ե. Ու. Կ.) 5—100

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Իմ շատ գործող մեքենաների
մասին

Ամեն մի աշխատող կին կամ տղամարդ 12 տարեկան հասակից կարող է օրական 1 ր. 50 կ. և աւելի արդիւնք ունենալ ինձանից գնված նորութեան շատ գործող մեքենաների միջոցով։ Նախնական գիտելիքներ պէտք չեն։ Մեքենաներն այստեղ և եթ կարելի է տեսնել։ Թելը ես եմ վաճառում և պատրաստ գործը, վարձատրելով կանխիկ փողով, ընդունում եմ։ Բոլոր մանրամասն տեղեկութիւնները տալիս եմ ձրիաբար և սիրով իմ գրասենեակումս կամ պօստով։ Կովկասի միակ ներկայացուցիչը լինում է Թիֆլիսում։ Դիմել՝ Тифлисъ, контора «скоровязальныхъ машинъ», Троицкая ул. 7, по сосѣдству съ глав. почтово-телеграфной конторою.
Զգուշացէք կեղծ մեքենաներից, որոնք զանազան անուններով առաջարկվում են։
(Ե. Չ. Ու. Կ.) 6—25

Ժողովրդական համալսարան

Կիրակի, մայիսի 13-ին
Զուբալովի հասարակական տանը
կը կայանայ
2 դասախօսութիւն
1) Պ. Սուրգուլաձէի, վրացերէն լեզւով
ԴԱՐՎԻՆԻ ԹԵՕՐԻԱՆ
2) Ալ. Ի. Խատիսեանի, հայերէն լեզւով
ՆՈՐՄԱԼ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ

Վրացերէն դասախօսութեան սկիզբն է ժամը 11-ին, իսկ հայերէնինը 12 ժամին։

ՄԻ ՀԱՅ
ԵՐԻՏԱՍԱՐԴ
որոնում է խոհարարի, դռնապանի, գործակատարի կամ որևէ պաշտօն։ Հասցէն՝ Вардисубанская ул. № 3, Ованесу Ованесову.
2—2

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ամսիս 13-ին, առաւօտեան 11 ժամին, Շամքոռեցոց ս. Աստուածածին եկեղեցում լինելու է ծխականների առաջին ընդհանուր ժողով՝ պաշտօնից հրաժարված հոգաբարձու պ. Նարիմանեանի փոխարէն՝ նոր հոգաբարձու ընտրելու, որի համար յայտնում եմ նոյն եկեղեցու ձայն ունեցող երկսեռ ծխականներին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեան մասնակցելու։

Թիֆլիսի հայոց եկեղեցիների Բ. մասի գործակալ՝ Ղևոնդ քահ. Մաժիկոնեան
(Չ. Կ.) 2—2

Լոյս տեսաւ
ԷԴՈՒԱՐԴ ԲԷՐՏՐԱՆ
ՄԵՂՈՒՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ
Թարգմ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
76 նկարով և փեթակի երեք գլխաւոր տեսակների գծագրական քարտերով։
ԳԻՆԸ 1 ՌՈՒԲԼԻ
Վաճառվում է Կովկասեան Շերամապահական կայարանում։
Ա. Օ. 8—10

Հին Նախիջևանի Ալլանի գիւղացի

Նաւասարդ
Նաւասարդեանը,

որը դռնապան էր Թիֆլիսում, Միքլին փողոցում Արտեմ Յարութիւնօվի ոսկեղէնի խանութի, մայիսի 3-ին Մ. Սահակեանի սրճարանից դուրս են եկել երկու անյայտ երիտասարդներ և տարել են յայտնի չէ Թէ ուր և մինչև այժմ չը վերադարձել։

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ

նրա ուր լինելու մասին տեղեկութիւն ունեցողներին, յայտնել ինձ։ Тифлисъ, Армянскій базаръ, дХудадова, Степану М. Меликянцу.
2—2

Մարգանեցի, պղնձէ, կօբալտի և անտիմօնի հանքատեղեր պահանջվում են արտասահմանեան ֆիրմաների համար։ Նոյնպէս և ուրիշ տեսակ հանքեր և այնպիսի կաղնէ մեծ անտառներ, որոնք ունենան տեսակ-տեսակ փայտեր, բարեհաճեն դիմել գրաւոր կերպով՝ Тифлисъ, Главный почтатъ, почтовый ящикъ № 41.
(Հ. Չ. Կ.) 3—3

„ՎԻՍԼԱ“
Վարշավեան կալբասանոցում
(Թիֆլիս, Գօլովինսկի պրօսպ. № 10, Կրուժօկի տակը)
ԱՌԵՒՏՈՒՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՊԱՏՃԱՌՈՎ
շտապով ծախվում է
ՄԱԳԱԶԻՆԸ
նոր սարքված հրաշալի կահկարասիքով (կամ առանց կահկարասիքի)։
ՆՈՅՆ ՏԵՂԸ
ծախվում են կալբասի գործարանի գործիքներ, նաև հրաշալի, նիկելով ծածկված, և հասարակ տասնորդական կշեռքներ։
(Ու. Կ. Ե.) 2—3

Ներսիսեան Հայոց Հոգևոր Դպրոցի Վարչութիւնը

սրանով յայտարարում է,

որ դպրոցի դասարաններում և իր բաժանմունքներում տեղ չը լինելու պատճառով, առաջիկայ 1907/8 ուսումնական Թւականին՝ դպրոցումս սկսած առաջին պատրաստականից աշակերտական ընդունելութիւն

չի լինելու։

(5, 9, 13, 19, 23) 3—5

„Գուտտենբերգ“
Գրախանութում վաճառվում է
Պօտեխին
ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ
108 պատկերով, Թարգմ. Մ. Վարդումեան
Բովանդակութիւն
Մեղուի բնական պատմութիւնը և նրա կեանքը. Մեղուանոցի կազմակերպութիւնը. մեղուների բերքով ապահովելը, բերքն և մեղուապահութեան զանազան եղանակները, Մեղուների հիւանդութիւնները և Թշնամիները. Փեթակների կազմութիւնը, մեղուապահական իրեր և գործիքներ. Մեղուների հոգատարութիւնը նրանց առաջին Թռչելուց մինչև ձագ տալը. Մեղուի բնական և արհեստական ձագ տալը. Մեղուների հոգատարութիւնը ձագ տալուց յետոյ և մինչև նրանց ձմերելու պատրաստելը. Մեղուապահութեան արդիւնքը և մեղուների ձմրան պատրաստութիւնները և մեղուի ձմերելը. Մեղուապահական արդիւնքների գործածութիւնը,
Գինն է պօստի ծախքով 1 րուբլի։
Դիմել՝ Тифлисъ, Книж. магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянцу. 3—5

ԻՄ ՈՐԴԻ Լևոն Գալստեան Մըկրտչեանցը (22 տարեկան) Ախալքալաքի գաւ. Ղաուրմա գիւղացի, հիւանդ լինելով եկել է Թիֆլիս բժշկվելու և մի օր պառկելով Միքայէլեան հիւանդանոցում, 2-րդ օրը դուրս է եկել և յայտնի չէ նրա ուր լինելը։ Խնդրում եմ նրա ուր լինելու մասին որևէ տեղեկութիւն ունեցողին յայտնել ինձ հետևեալ հասցէով՝ Тифлисъ, 8 уч. д. Мирзоева № 1 Трактиръ Гугасу Бекназарову. 4—3

„ՓԱՐՈՍ“
ՆԻԿ. ՄԱՏԻՆԵԱՆԻ
Լրագրա-գրախանութում
(Թիֆլիս, Երևանեան հրապարակ)
ՆՈՐ ԳՐՔԵՐ
«ՅԱՌԱՋ»-ի գրադարանի

1) Նեկրասօվ. Ինչպիսի կարգեր են հարկաւոր ժողովրդին և ինչպէս նրանց հասնել, 94 եր.	10 կոպ.
2) Արամայիս. Վնասակարը, 32 եր.	4 կոպ.
3) Չեռնով. Դասակարգային կռւի Թէօրիայի շուրջը, 64 եր.	10 կոպ.
4) Խորամանկ կարգեր, 48 եր.	10 կոպ.
Բեն. Գրիգորեան. «Ազատութեան խանդ», բանաստեղծութիւններ, 64 եր.	20 կոպ.
Սկօբելցինա. Ժողովների և միութիւնների ազատութիւնը, Թարգմ. Կ. Ալբիեանի, 48 եր.	10 կոպ.
Ն. Ա. Ազբելօվ. Կանանց հարցը Եապօնիայում, (պատկերազարդ) Թարգմ. օր. Նունէ Թայիրեանի, 96 եր.	25 կոպ.
Բ. Իշխանեան. Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, 135 եր.	40 կոպ.
М. Петросянъ. «Изъ за куска хлѣба»	10 կոպ.
Պօտեխին. Մեղուաբուծութեան ձեռնարկ, 108 պատկեր, 168 երես, Թարգմ. Մելիք Վարդումեանի	75 կոպ.
Ար. Արամեան. Աշխարհի ամենագեղեցիկ գիրքը, 240 եր.	60 կոպ.
Ջանիկ. Արքեծը Թագաւորում է սէր և խաղաղութիւն, 30 եր.	5 կոպ.
Լևոն Մանուէլեան. Բանաստեղծութիւններ և պօէմաներ, գիրք երկրորդ, 107 եր.	40 կ.
Կ. Կաուցկի. Դասակարգային շահերի հակասութիւնները 1789, Թարգմ. Ռ. Դաշտօյեանի, 120 եր.	20 կոպ.
Կ. Կաուցկի. Ներկայացուցչական կառավարութիւն, Թարգմ. Ռ. Խան-Ազատի, 240 եր.	40 կոպ
Լ. Տօլստոյ. Դաստիարակութիւն և կրթութիւն, Թարգմ. Եղ. Պօղոսեանի 104 եր.	25 կոպ.
Ս. Մելիք Սողոմոնեան. Արևան ձայներ, երրորդ տպագր. 230 եր.	50 կոպ.
Պիմէնօվ. Մշտական զօրք և միլիցիա, Թարգմ. Ցար. Եսայեանի, 16 եր.	5 կոպ.
В. Черкезовъ. Наконецъ то сознались! Отвѣтъ К. Каутскому, 25 стр.	10 կոպ.
А. Агаронянъ. Повѣсти и разсказы, перев. А. Кусикова 50 стр.	35 կոպ.

«ՅԱՌԱՋ»-ի գրադարանի—մինչև այժմ լոյս տեսած 38 գրքերը—4 ր. 28 կ. արժողութեամբ ուղարկվում է ցանկացողներին առանց ճանապարհածախսի։ Պատուէրները առանց կանխավճարի ՉԵՆ ընդունվում։
«Հրատ. Ընկ. Ստ. Լիսիցեան և Ընկ.» բոլոր հրատարակութիւնների պահեստը գտնվում է մեզ մօտ։
Ծախվում են տեղական և մայրաքաղաքների լրագիրներ, հայ հեղինակների գըրուածներ, հայ և ռուս նորագոյն հրատարակութիւններ և դպրոցական դասագրքեր։
Ընդունվում են հրատարակութիւններ կոմիսիայով և պահեստի համար, մատչելի պայմաններով։
Դիմել՝ Книжный кіоскъ «ФАРОСЪ» Ник. Матиняна, Эрив. площадь, Тифлисъ.
(Կ. Ե. Ու.)

РѢДКОЕ ИЗДАНІЕ
Подписка принимается только до 1 іюля.
За 6 руб. подписчики получатъ 24 №№ журнала, и 24 тома приложеній.
„ВОЛНЫ“
Журналъ выходитъ два раза въ мѣсяцъ. При каждомъ № особое приложеніе
24 нумера журнала, откликающагося на всѣ злобы дня и наряду съ нимъ
24 книги приложеній отъ 10—15 печатн. листовъ каждая, посвященныя произведеніямъ великихъ европейскихъ писателей, отражающимъ доброе старое время во всемъ его блескѣ и великолѣпіи.
10 Книгъ „РОКАМБОЛЬ“ соч. Понсонъ-дю-Террайля
2 Книги „ДЕКАМЕРОНЪ“ соч. Боккачіо.
2 Книги Поль-де-Кока 1) Похожденіе мужа покинутаго женой. 2) Бѣдовая женщина и др.
2 Книги ЗАПИСКИ ПАЛАЧА
2 Книги Тайны Берлинскаго двора
2 Книги Тайны Русскаго двора
1 Книга Тайны ЛОНДОНА
2 Книги Тайны ЖЕНСКИХЪ МОНАСТЫРЕЙ сочиненіе Карачіолло.
1 Книга ПОЛУДѢВЫ Марсель-Прево
Годовые подписчики, внесшіе всю подписную плату до 1 іюля, получатъ безплатно приложеніе впервые появляющіяся въ столь полномъ видѣ историческія мемуары.
„Короли на эшафотѣ“
Подписная цѣна за годъ 6 р., за $^1/_2$ года 3 р., допуск. разсрочка
Контора журн.: С.-Петербургъ, Невскій пр., д. № 82
Редакторъ-Издатель Р. Л. Антроповъ.
(շաբաթը 1 անգամ) 3—3

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

յայտնում է ընդհանրութեան, որ 1907—1911 քառամեակի Թիֆլիսի քաղաքային խորհրդի ձայնաւոր ընտրողների ԵՐՐՈՐԴ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ (8, 9 և 10 քաղաքամ.) ՎԵՐՋՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ տպագրած օրինակները, ինչպէս և ընտրութիւններ կատարելու կանոններն ու հրահանգները ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ Քաղաքային Վարչութեան դիւանում մայիսի 11-ից ցեր. 10—3 ժ. բացի կիրակի և տօն օրերը։

2—3

Ֆրանսիական Շոգենաւային Ընկերութիւն
«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ» — «MESSAGERIES MARITIMES»

21-ին մայիսի, (3-ին յունիսի ըստ Ն. Տ.) մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ «Bosphore» շոգենաւը, հանդիպելով Տրապիզոն, Սամսոն, Կ. Պոլիս, Դարդանէլ, Զմիւռնիա, Պիրէյ, Քանէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակները մինչև Պարիզ, Նիւ-Եօրք և Շանղհայ Հեռաւոր Արևելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան Թիֆլիսի գործակալ՝ պ. Վ. Ցակոբեանին, նախկին Արծրունու գալէրէյում, Թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ Թիւ 608։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան, բացի կիրակի օրերից։ 1—1

Տպարան «Հ Ե Ր Մ Ե Ս» Ընկ.
Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5. Телефонъ № 852